№ 165 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24 1907 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24 № 165

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութեան ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

— ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ —

ՄՇԱԿ

քաղաքական եւ գրականական լրագրի

ԱՌԱՋԻԿԱՅ 1908 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(36-րդ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր. մէկ ամսվանը 1 րուբլի:

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն):

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարիամ և Աւետիս Մանուէլեանցները ցաւօք սրտի յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին՝ առաջինը իր թանգագին քրոջ, իսկ երկրորդը քենու՝

ՄԻՐԱՆՈՅՇ ՇԱՀՎԵՐԴԵԱՆՑԻ

(Աշ. II գիմնազիայի)

վաղաժամ մահը, որը տեղի ունեցաւ նոյեմբերի 21-ին: Հոգեհանգիստը կը կատարվի նոյեմբերի 24-ին, երեկոյեան ժամը 5-ին: Յուղարկաւորութիւնը ամսիս 25-ին, կիրակի, առաւօտեան ժամը 10-ին սեփական տնից (Չուղուրէթ, Վօզօպոգիեօմի փող. № 14) դէպի Չուղուրէթի ս. Աստուածածնի եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

(շ. կ.) 1—2

II Փոխադարձ վարկի ընկերութեան անդամների

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

նշանակված է կիրակի, ներկայ նոյեմբերի 25-ին, առաւօտեան ժամը 10-ին քաղաքային դումայի դահլիճում:

Խնդրում են դահլիճը մտնելիս ներկայացնել անդամակցական անդորրագրերը:

(շ. կ.) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, նոյեմբերի 24-ին, պ. պ. անդամների, կանդիդատների և նրանց անդամների համար

Հայոց Դրամատիկական դերասանների ընկերակցութիւնը

կը ներկայացնէ

I

„ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ“

Կոմ. 1 գործ. Բիլիբինի

II

ԾԵՐՈՒԿԸ ՀԱՆՆԱՔ Է ԱՆՈՒՄ

Վօդ. 1 գործողութեամբ

(առ.) 1—1

ՄԻ ԱՌԻԹ

Բոլոր անոնք որ կուզեն Կովկասի և Ռուսաստանի այլ մասերէն գնումներ ընել Անգլիական հրապարակէն, ըլլայ դա կերպասի կամ մետաղի վերաբերեալ, ինչպէս և գանազան կարգի մեքենաներ, կամ տեղս գտնուող այլ և այլ գործարաններու հետ հաղորդակցութեան մէջ մտնել,

Մ. Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

յանձն կառնէ այդպիսի գործեր: Պատրաստ է նոյնպէս յաճախորդներ գտնել բոլոր անոնց որ ապրանք մտցնել կուզեն Անգլիական հրապարակի վրայ:

Պայմաններ ու մանրամասնութիւններ կարելի է ստանալ դիմելով.—M. P. PAPAZIAN, 202, Marylebone Road, London W. Տեղեկութիւններ և կաթալօկներ կը ղրկուին միայն անոնց որ կը ներփակեն ճանապարհածախսը: (Դրոշմի պարագային 20 կ.):

(2.) առ. 2—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատգամաւորութեան առիթով. Վերջին տեղեկութիւններ. Պերճ Պռօշեան. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Թիֆլիսի գեներալ-նահանգապետի կարգադրութիւնը. Տաւրիկեան պալատից. Պետական Դումայի վերջին նիստերը. Պետական Դումայի շուրջը. Էջմիածնի շրջանում. Դատաստանական դահլիճից. Թատրոն և երաժշտութիւն. Թուրքահայ սովեալների օգտին. Տեղեկութիւններ գաւառից. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Ռուսաստանի կեանքից. Նամակներ խմբագրութեան.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Գիւղական նամակներ:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

III

Ի՞նչ կարող է սպասել կառավարութիւնից իբրև նպաստ և դիւրութիւն մեր երկրի աղէտեալ ժողովուրդը:

Առաջին՝ ցանկալի էր, որ ազգաբնակութիւնը կարող լինէր ստանալ հացահատիկ, կամ գումարներ հացահատիկը գնելու համար:

Երկրորդ՝ ցանկալի է, որ իրաւունք տրվէր տնային անասուններին արածացնել անտառներում և դրանով մասամբ թեթևացնել խոտի պաշարների պակասութիւնը:

Երրորդ՝ ցանկալի է, որ ժողովրդի համար ստեղծվեն հասարակական աշխատանքներ, որոնք հնարաւորութիւն տային նրան կողմնակի աշխատանքով լրացնել տան կարիքը:

Չորրորդ՝ ցանկալի է, որ գիւղական նախկին պարտքերի հատուցումը յետաձգվէր մի յայտնի ժամանակամիջոց և դիւրութիւններ տրվէին միւս տուրքերի վերաբերութեամբ:

Միևնոյն ժամանակ ցանկալի է, որ վարչական մարմինները նորից տեղեկութիւններ ժողովէին մեր երկրի գիւղական կարիքների մասին, մանաւանդ որ մինչև այժմ կազմված տեղեկագրերների մէջ հաշուի չեն առնված այն վնասները, որ ստացել է մեր երկիրը հոկտեմբերեան սարսափելի ցրտից ու ձիւնից:

Ահա այն կէտերը, որոնց շուրջը կարող են պտտել պատգամաւորութեան որոնումները: Թուցէ դրանց վրա աւելացվեն և մի երկու՝ տեղական նշանակութիւն ունեցող կէտեր, որոնց մասին կը խօսեն եկած պատգամաւորները:

Հանդէս բերելով այս կամ այն կէտը, անհրաժեշտ է, որ պատգամաւորութիւնը կարող լինէր գործնական ցուցումներ անել և, խօսելով օրինակ հասարակական աշխատանքներ կազմակերպելու կամ անտառներից օգտվելու կարևորութեան մասին, նշանակէր թէ որ շրջանում և ինչ հասարակական աշխատանքներ կարելի է ծրագրել ազգաբնակութեան համար, թէ ինչ անտառներ կարող էին ծառայել բաւարարութիւն տալու տնային անասուններին:

Անշուշտ նպատակայարմար կը լինէր պատրաստել զեկուցագրեր Փոխարքային մատուցանելու իւրաքանչիւր շրջանի կարիքների մասին, կամ բոլոր զեկուցագրերը կենտրոնացնել մի մեծ տեղեկագրի մէջ, որը կը պարունակէր իր մէջ երկրի որոշ շրջանի կարիքների համագումարը:

Որպէսզի այդ զեկուցագրերը կամ ընդհանուր յուշագիրը ստանան էական նշանակութիւն, կարևոր է, որ նրանք կազմված լինեն բովանդակալի և ամփոփ կերպով գաղափար տան իրերի վիճակի մասին աղէտեալ շրջաններում:

Կարող կը լինի՞ արդեօք պատգամաւորութիւնը բաւականաչափ նիւթ ունենալ և լուրջ տեղեկագիր կազմել— այդ ցոյց կը տայ մերձաւոր ապագան:

Մեր գաւառական գործողներից իւրաքանչիւրը պէտք է նպաստէ իր կողմից տեղեկագրերի կարելին չափ հիմնաւոր կազմված և խմբագրված լինելուն:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք ստացանք հետևեալ հեռագիրը Պետերբուրգի մեր թղթակցից.

Պետերբուրգ, 22 նոյեմբերի, 6 ժամ

Պետական Դուման իր նիստում բըւէարկութեամբ մերժեց հերթական հարցերին անցնելու եօթ առաջարկներն էլ:

Հոկտեմբերեանների այդ պարտութիւնը ցոյց է տալիս Դումայի կենտրոնի խախուտ լինելը:

Սօցիալ-դեմօկրատական ֆրակցիայի անդամների դատավարութեան ժամանակ դատարանի նախագահը դատի սկզբում արգելեց նախկին պատգամաւորներին անել յայտարարութիւններ: Մեղադրեալները դեմօնստրատիվ կերպով թողին դատարանը. նրանց ետևից դուրս եկան պաշտպանները և հանդիսականները:

Բարձրագոյն դպրոցները, տպարանները և գործարանները գործադուլ են արել: Դումայի սօցիալ-դեմօկրատ պատգամաւորները թողին Դումայի նիստը:

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պետական Դումայի վերջին նիստը աչքի էր ընկնում վիճաբանութիւնների սովորական խանդոտութեամբ և ուժգնութեամբ: Պատգամաւոր Տիմօշկինը մի գռեհիկ ճառով և տգեղ գոյներով նկարագրելով Կովկասում ապրող ռուս մարդկանց՝ մասնաւորապէս երկաթուղային բանւորների կեանքը, ցոյց տուեց Գանձակի յաջորդ Կորիւն վարդապետի պատկերը հայդուկի շորերով:

Կառավարական շրջաններում ուշադրութիւն են դարձրել մամուլի այն տեղեկութեան վրա, որ Օզուրգէթի գաւառում արգելված է հարսանիքներ անել առանց ոստիկանութեան մասնակցութեան: Տեղեկութիւններ են ժողովվում. («Зак.»)

—

Թիւրքաց զօրքի արշաւանքը Պարսկաստանի սահմանները և պարսկական մի քանի կէտերի գրաւումը, ինչպէս յայտնի է, ստիպեցին ռուսաց կառավարութեան առաջադրութիւններ անել դեսպան Զինովիևի միջոցով սուլթանին և պահանջել թիւրքաց զօրքի յետս կոչումը պարսկական հողից: Սակայն սուլթանը մինչև այսօր խուլ մնաց ռուսաց դեսպանի յորդորներին, և այժմ, ինչպէս հաղորդում է «С. Петербургскія Вѣдомости» լրագրի թղթակիցը Կ. Պօլսից, խնդիրը շատ ծանր կերպարանք է ստանում: Վերջին ժամանակներս դեսպան Զինովիևը խիստ առաջադրութիւն արեց սուլթանին, պահանջելով որ օսմանեան զօրքն անմիջապէս հեռանայ Ատրպատականում գրաւած կէտերից, քանի որ այդ կէտերը գտնվում են ռուսական ազդեցութեան շրջանի մէջ: Սուլթանը, ինչպէս հաղորդում է թղթակիցը, կոպիտ պատասխան տուեց դեսպանին և ոչ մի տրամադրութիւն չէ ցոյց տալիս կատարել Ռուսաստանի պահանջը: Այդ առիթով իշխան Ուխտոմսկու թերթը ասում է, թէ որքան էլ Ռուսաստանը տկարացած լինի՝ վերջին պատերազմից, բայց նա դեռ այնքան ոյժ ունի, որ կարող է ցոյց տալ քայքայվող և լուծվող Թիւրքիային իր յանդգնութեան հետևանքները: Թղթակիցը աւելացնում է, որ սուլթանի գլխաւոր յոյսը՝ գերմանական կայսրի վրա է:

—

Երևանի նահանգապետը հաղորդեց Կովկասի Փոխարքայի դիւանատան, որ Նոր-Բայազէտի գաւառական բժիշկը, տեղական գաւառապետի օգնականի հետ միասին և ազգաբնակութեան ընտրեալների ներկայութեամբ բժշկական քննութիւն կատարելով, հաստատել է, որ Նոր-Բայազէտի գաւառի Նորադուզ և Ղշլաղ գիւղերում երևացել է յնդացաւ (цынга) հիւանդութիւնը: («Կ.»)

—

Պեատիգօրսկ, 22 նոյեմբերի

Միանալով մահմեդական ազգի վշտին, Պեատիգօրսկի հասարակութիւնը իր անկեղծ ցաւակցութիւնն է յայտնում ազգակից ժողովրդի հոգևոր պետ և հաշտարար շէյխ-ուլ-իսլամի մահվան առիթով:

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆԻ ՄԱՀԸ

Բագուից ստացված մի հեռագիր գուժում է հայոց յայտնի ժողովրդական գրող և վիպասան Պերճ Պռօշեանի մահը:

Գերեզման է իջնում անցեալ դարի վաթսունական թւականների «Կռունկի» և ապա «Մեղուի» շուրջը բոլորված հայկական մտաւոր-բարոյական հոսանքի վերջին մոհիկաններից մինը: Գերեզման է իջնում «Սօս և Վարդիթերի», «Հացի խնդրի», «Կռուածաղիկի», «Շահէնի», «Ցեցերի», «Բղդէի», «Ակիզբըն երկանցի» հեղինակը:

Անշուշտ Պերճ Պռօշեանը պատուաւոր և բաւական մեծ տեղ կը գրաւէ մեր ազգային-եկեղեցական-դպրոցական և հասարակական կեանքի մէջ:

Նա գործել է դպրոցական ասպարիզում Ճանշեան-Մուրադեան խմբի մէջ, Շուշու թեմական դպրոցում, և եղել է ուսուցիչ Ագուլիսում, վարել է Երևանի թեմական տեսչի պաշտօնը մի քանի տարի և այդ պաշտօնի մէջ նա ստացել է հանգուցեալ Գէորգ կաթողիկոսից հայկաբանութեան մագիստրոսի տիտղոսը. եղել է ուսուցիչ Ներսիսեան դպրոցում, որից ստանում էր և կենսաթոշակ, և պատրաստել է մի քանի սերունդ աշակերտներ, մասնակցել է մեր ազգային-եկեղեցական բոլոր նշանաւոր դէպքերին և շարժումներին մինչև անցեալ դարի վերջը:

Գրող-վիպասանի հետ միասին նա եղել է և բանասէր և աշխատակցել է գրեթէ մեր բոլոր պարբերական թերթերի և հանդէսների մէջ իր վէպիկներով, պատկերներով և հրապարակախօսական յօդուածներով: Ի թիւս այլոց նա աշխատակցել է և «Մշակին» սրա գոյութեան առաջին տարում:

Նրա առաջին և նշանաւոր դեբիւտը՝ հայ գրականութեան մէջ՝ որ գասեց նրան գրողների շարքում, եղաւ «Սօս և Վարդիթեր» կենցաղական-գիւղական վէպը, որ մնաց նրա բոլոր գործերի մէջ լաւագոյնը:

Նա մի համեստ, աշխատասէր, ժողովրդասէր գործիչ էր, և նրա յիշատակը յարգանքով կը յիշվի ռուսահայ ժողովրդի կուլտուրական զարգացման պատմութեան մէջ:

Նա մեռաւ 70 տարեկան հասակում, ծնված լինելով 1837 թ. յունիսի 3-ին, Աշտարակ գիւղում

Մանրամասն կենսագրութիւնը կը հաղորդենք յաջորդ անգամ:

Հանգիստ բազմավաստակ և բազմաշխատ հայ գործչին և ժողովրդական գրողին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԳԵՆԵՐԱԼ-ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Թիւրիմացութիւններից խուսափելու համար, պատուիրում եմ ի տես և ի գործադրութիւն ընդունել, որ թէ իմ, թէ Կովկասի Փոխարքայի դիւանատան ոստիկանական մասի յատուկ բաժնի և թէ իմ նախորդ ժամ. գեներալ-նահանգապետներ՝ Գ. Մ. Ալիխանով-Աւարսկու և Գ. Լ. Տիմոֆէևի տուած զէնք կրելու և պահելու թոյլտուութեան վկայականները իրանց ոյժը պահում են զինուորական դրութեան ամբողջ ժամանակամիջոցում ինձ յանձնված գեներալ-նահանգապետութեան սահմաններում:

Թիֆլիսի նահանգի սահմաններում զէնք կրելու և պահելու համար թոյլտուութեան վկայականներ տալը ես թողել եմ Թիֆլիսի նահանգապետին, իսկ Զաքաթալայի շրջանի սահմաններում—նրա գաւառապետին. բայց Թիֆլիս քաղաքի համար այդ վկայականները, ինչպէս և այլ նահանգների գեներալ-նահանգապետների կամ առհասարակ այդ վկայականները տալու իրաւունք ունեցող անձանց տուած վկայականները ընդունելի են միայն այն ժամանակ, երբ նրանց վրա իմ ստորագրութիւնը և կնիքը կը լինեն:

Իսկականի վրա ստորագրեց. Թիֆլիսի նահանգի և Զաքաթալայի շրջանի ժամ. գեներալ-նահանգապետ գ.-մ. Բեաբինկին:

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՊԱԼԱՏԻՑ

(Սեփական թղթակցից)

Պետերբուրգ, 13 նոյեմբերի

Այսօրվայ նիստը սպասվում էր անհամբերութեամբ, որովհետև այդ նիստում պիտի քննվէր պետական նշանակութիւն ունեցող այն սկզբունքային հարցը՝ թէ ներկայումս Ռուսաստանում գոյութիւն ունի՞ արդեօք սահմանադրական կառավարչական ձևը թէ՞ ոչ:

Պետական Դումայի դեռ բացվելու առաջին օրերից՝ պատգամաւորների մի յայտնի շրջանում միտք էր յղացվել Պետական Դումայի բացման առիթով Կայսրի ողջոյնին պատասխանել պատշաճաւոր ուղերձով: Աջակողմեանները դրանով ի միջի այլոց ուզում էին իրանց համար պարզել հոկտեմբերեանների քաղաքական դաւանանքը և, այդ պատճառով, դրան առանձին նշանակութիւն էին տալիս:

Այդ առաջարկի համաձայն՝ Դուման ընտրեց մասնաժողով, որը պիտի մշակէր ուղերձի բովանդակութիւնը և այնպէս ներկայացնէր Դումային: Մասնաժողովի մէջ մտան բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները, որոնցից իւրաքանչիւրը առաջարկեց իր կուսակցական քաղաքական դաւանանքի համաձայն կազմված առանձին ուղերձի նախագիծ:

Սկզբից և եթ պարզվեց, որ ուղերձը պէտք է պարունակէ իր մէջ երկու մաս. մէկը՝ ողջոյն և շնորհակալութիւն, երկրորդը՝ քաղաքական ձգտումներ, թէ ինչ գործունէութիւն է ընդգծում Դուման իր առաջիկայ գործունէութեան համար: Մասնաժողովի մէջ մտնող կուսակցութիւնների ներկայացուցիչ-պատգամաւորները միահամաձայն համախոհ էին մի հիմնական կէտում՝ թէ Կայսրի ողջոյնին պէտք է շնորհակալութիւն յայտնել, և որքան որ պարզ էր ուղերձի այդ մասը, այնքան անորոշ էր նրա երկրորդ մասը՝ բովանդակութիւնը, որովհետև այդտեղ պէտք է երևան գային սկզբունքային ուղղութիւնները։

Աջակողմեանները, օրինակ, իրանց ներկայացրած ուղերձի մէջ ամենապարզ կերպով անց էին կացրել այն միտքը, թէ նրանք չեն ընդունում ոչ մի սահմանադրական կարգ, որ Ռուսաստանը կառավարվում է դարձեալ նոյն հին կարգերով և օրէնքներով, ինչ որ մինչև հոկտեմբերի 17-ն էր։

Հոկտեմբերեանները սկզբում ներկայացրել էին Պլեւակօյի կազմած ուղերձը, որ շատ քիչ էր տարբերվում աջակողմեանների խմբագրածից, միայն թէ այնտեղ շատ մութ կերպով ակնարկված էր ինչ-որ բարենորոգված կարգերի մասին։ Պատգամաւոր Ուվարօվը ներկայացրել էր իր խմբագրած ուղերձը, որտեղ աւելի էր որոշում բարենորոգված կարգերի բնոյթը, բայց այնտեղ կային և այնպիսի տեղեր, որոնք չէին ընդունվի ձախակողմեանների կողմից։

Ձախակողմեանները պահանջում էին, որ «բարենորոգված կարգեր» խօսքերի տեղ դրվեն «սահմանադրական կարգեր» խօսքերը և դէն ձգվեն «ցանկանում ենք անձամբ ներկայանալ» խօսքերը, որովհետև այդ հանգամանքը կարող էր մի շարք անսպասելիքներ առաջացնել։

Բանակցութիւնները շատ երկար տևեցին և մինչև նիստը բացվելը ոչ մի կուսակցութիւն յայտնի որոշում չէր կայացրել իր անելիքի մասին։ Կադետները և միւս ձախակողմեանները կարողացել էին համոզել հոկտեմբերեաններին, որ նրանք ուղերձի մէջ չը մտցնեն «ցանկանում ենք անձամբ ներկայանալ» խօսքերը, և, թողնելով անփոփոխ «բարենորոգված կարգեր» խօսքերը, հոկտեմբերեանների լիդէր Գուչկովը ամբիոնից պէտք է բացատրէր, որ այդ խօսքերը գործ ածելով, նրանք հասկանում են միայն սահմանադրական կարգեր։

Աջակողմեանները, ընդհակառակը, պահանջում էին ուղերձի մէջ անպատճառ մտցնել «Ինքնակալ Միապետ» խօսքերը և բացասել սահմանադրական կարգերը։ Այդ հարցի վերաբերեալ մինչև անգամ նրանց մէջ պառակտում առաջ եկաւ. աւելի ծայրայեղները չէին ուզում ոչ մի տառ անգամ զիջել հոկտեմբերեաններին, առարկելով որ չը պէտք է թոյլ տալ նրանց ընկնելու կադետների գիրկը, իսկ աւելի չափաւորականները, չը ցանկանալով այդ հարցից կօնֆլիկտ առաջացնել, աշխատում էին համաձայնեցնել հոկտեմբերեաններին և աջակողմեաններին, բայց չը կարողացան ոչ մի հետևանքի հասնել և իրանք հեռացան աջակողմեաններից։

Ահա այսպիսի պայմաններում բացվեց այսօրվայ նիստը։

Պատգամաւոր Պլեւակօն զեկուցեց Դումային ուղերձը այն խմբագրութեամբ, ինչպէս որ անցել էր մասնաժողովի մէջ։ Զեկուցումից յետոյ խօսք է խնդրում Գուչկովը։ Նա ձախակողմեաններին տուած իր խոստման համաձայն բացատրում է, որ ուղերձի մէջ մտցրած «վերափոխված պետական կարգեր» խօսքերը հասկանում են սահմանադրական մտքով, որովհետև «Կայսրը հոկտեմբերի 17-ին տալով ժողովրդին յայտնի մանիֆէստը, կամաւոր կերպով սահմանափակեց իր իրաւունքները»։ Գուչկովը խօսում է հանգիստ, գեղեցիկ, բայց նրան պակասում է տեմպերամենտ, նա չէ կարողանում իր հայեցակէտը պարզ և հաստատ կերպով անցկացնել։

Նա իր ճառի մէջ աշխատում է անցկացնել այն միտքը, որ հոկտեմբերի 17-ի մանիֆէստը բարձրագոյն շնորհ էր ժողովրդին, և նա մի քանի անգամ ընդգծում է այդ։ Եւ հետևաբար ասում է նա, մենք անկարող ենք պարտաւորեցնել կայսրին սահմանադրական պրինցիպները հասկանալ մեր մեկնաբանութեամբ։

Ընդհանուր միտքը Գուչկովի այն է, որ պէտք է կուսակցական, դասակարգային և այլ շահերն ու միտումները մի կողմ դնել և այդ ուղերձը ընդունել այն խմբագրութեամբ, ինչպէս որ առաջարկում է մասնաժողովը։

Նրանից յետոյ խօսում է Միտրոֆան եպիսկոպոսը ծայրայեղ աջակողմեանների կողմից։ Նա առաջարկում է որ «Ամենաողորմած կայսրը» խօսքերից յետոյ անմիջապէս դրվեն «Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսրին Ռուսաստանի Ինքնակալին» խօսքերը, և ասում է, որ միայն այդ դէպքում նրանք կարող են ընդունել ուղերձը, հակառակ դէպքում նրանք միանգամայն կը հրաժարվեն այդպիսի ուղերձ քուէարկելուց։

Ամբիոն է բարձրանում ժողովրդական ազատութեան կուսակցութեան լիդէր՝ պատգամաւոր Միլիւկովը։ Տիրում է լռութիւն. բոլորը լարված ուշադրութեամբ լսում են թէ ինչ պէտք է ասի նա օպպօզիցիայի կողմից։

Միլիւկովը նախ և առաջ յայտնում է, որ ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը վճռել է չը ներկայացնել իր առանձին ուղերձը երրորդ Պետական Դումային, որովհետև նա արդէն ներկայացրել է առաջին Դումայում իր ուղերձը, որտեղ մանրամասն կերպով պարզված է իրանց հայեցակէտը, թէ ինչ միջոցներով կարելի է բուժել այն խոր վէրքերը, որոնք առաջ են եկել այսքան երկար ժամանակ ապօրէն կառավարութեան շնորհիւ։ «Մենք այնտեղ ասում էինք,—շարունակում է Միլիւկովը,—որ մինչև չը վերանայ այն սիստեմը, որով մի ազգութիւն, դաւանութիւն կամ դասակարգ օգտվում է աւելի լայն իրաւունքներով, քան Ռուսաստանի միւս ազգաբնակութիւնը, որ քանի հողային հարցի լուծումը կախված է օդի մէջ, քանի իրականութիւն չեն ստանայ բոլոր այն ազատութիւնները, որոնք տրված են հոկտեմբերի 17-ի մանիֆեստով, երկիրը չի խաղաղվի։ Այժմ գրել նոր ուղերձ ոչ մի միտք չունի. բայց մենք մեզ համար իրաւունք ենք վերապահում հարկաւոր փոփոխութիւններ մտցնել առաջարկված ուղերձի բովանդակութեան մէջ. դա կախված է այսօրվայ նիստի ընթացքից, թէ նա ինչ ձև և ուղղութիւն կընդունի»։ Այս փոքրիկ բացատրութիւնից յետոյ, Միլիւկով աշխատում է վերլուծութեան ենթարկել թէ ինչ իրաւունքներ էր պատկանում կայսրին մինչև հոկտեմբերի 17-ը և ինչպիսի սահմանափակումներ կան այժմս հիմնական օրէնքների մէջ.—այս փոփոխութիւնը կատարվել է հոկտեմբերի 17-ի մանիֆեստով և կայսրը այդ օրվանից դառել է «սահմանադրական միապետ»։ «Այն, ինչ որ ասաց պատգամաւոր Գուչկովը, մեզ բաւաբարութիւն չը տուեց, որովհետև ժողովուրդը չէ սպասում խօսքեր և ինչ որ իլլիւզիաներ, այլ նա պահանջում է, որ ժողովրդական ներկայացուցիչները այս բարձր ամբիոնից պարզ և որոշ յայտնեն, որ այժմս այլ ևս գոյութիւն չունի ինքնակալութիւնը իր լայն իմաստով, կայսրը այժմ սահմանադրական միապետ է։ Այդ յայտարարութիւնը անհրաժեշտ է երկիրը խաղաղացնելու համար, և նա՝ ժողովուրդը սպասում է այդ»։ Ապա դիմում է հոկտեմբերեաններին յայտնելով որ նրանք մի այսպիսի կարդինալ հարց վճռելիս լինեն շիտակ և մի ճանապարհ բռնեն առանց տատանվելու։ Այս էր գլխաւոր առժամը Միլիւկովի ճառի իմաստը, բայց նա չը կարողացաւ յայտնի ոյժ տալ իր ճառին և նա առանձին ազդեցութիւն չունեցաւ։

Միլիւկովը ասաց, որ կադետների ֆրակցիան միանում է այն առաջարկութեան, որը առաջ է մղվում լեհական կօլօի կողմից, այն է՝ որ ուղերձի մէջ «բարձրացնել ընդհանուր բարեկեցութիւնը» խօսքերից յետոյ աւելացնել «և բաւարարութիւն տալ բոլոր այն ազգութիւնների արդար ձգտումներին, որոնք մտնում են ռուսաց կայսրութեան կազմի մէջ»։

Արսէն Բալանթար

(Կը շարունակվի)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԸ

Մինիստրների Խորհրդի նախագահի ճառից յետոյ յայտարարվում է կէս ժամով ընդմիջում։ Նիստը վերսկսվում է ժամը 3 և 35 րօպէին։

Գուչկովը հոկտեմբերեանների և չափաւոր աջակողմեան ֆրակցիաների կողմից առաջարկում է հետևեալ բանաձևը.

«Դուման՝ լսելով Մինիստրների Խորհրդի նախագահի հաղորդագրութիւնը և հաստատ վճռելով անյապաղ ձեռնարկել օրէնսդրական աշխատանքի՝ կեանքում մտցնելու պետութեան համար հասունացած անյետաձգելի վերանորոգութիւնները, և անյողդողդ, օրէնքների մէջ յիշատակված սահմաններում, իրականացնել կառավարութեան օրինաչափ գործունէութեան վրա կանոնաւոր հսկողութիւն,—անցնում է հերթական գործերին։ (Կենտրոնում ծափահարութիւն)։

Կոմս Բոբրինսկին միանում է Գուչկովի բանաձևին։

Մակլակովը կարծում է, որ եթէ Դումային կարևոր է իմանալ կառավարութեան կարծիքը, ոչ աւելին, կառավարութիւնն էլ պէտք է Դումայի կարծիքը իմանայ։ «Այդ կարծիքը պարզված է այն փաստաթղթի [illegible], որը [illegible] մենք կշռեցինք իւրաքանչիւր խօսքը։ Դիմելով կայսրին, Դումայի մեծամասնութիւնը ասաց, որ Ռուսաստանը խաղաղացնելու և ժողովրդական բարեկեցութիւնը բարձրացնելու միակ միջոցն է—հոկտեմբերի 17-ի մանիֆեստի իրականացումը ամբողջովին։ Ռուսաստանի անցրած անհեղ պատահարներից յետոյ մենք մտնում ենք հանգստութեան շրջանը։ Յեղափոխութեան տագնապը յիրաւի անցել է. հասել է բարենորոգումների ժամանակը։ Այդ բարենորոգումները մերժել այժմ չէ կարելի (ծափահարութիւններ)։ Պատմութեան առաջ մեղաւորը նա կը լինի, ով նրանց կուշացնէ։ Այդ դրօշի վրա է արդէօք մինիստրութիւնը կանգնած։ Ես այստեղ եկայ ոչ թէ անիւների տակ ձողեր դասելու, այլ օգնելու նրանց, ով ծառայում է Ռուսաստանին։ Ես կողջունեմ քաղաքական հակառորդներին, եթէ նրանք կանեն այն բարիքը, որպիսին չը կարողացան անել մեր ձեռքերը։ Խորին վշտով և խորագոյն կսկիծով ես լսեցի մինիստրական դեկլարացիան։ Փոխարէն այն ուրախալի լուրի՝ թէ յեղափոխական տագնապը մեզ այլևս չէ վախեցնում, ինչպէս կարող էր վախեցնել անցեալ տարի, և այդ պատճառով ձեզ հետ միասին առանց ուշացնելու կիրականացնենք այն, ինչ որ երկու տարի առաջ խոստացանք,—մենք լսեցինք, որ յեղափոխական շարժման դէմ կազմակերպած կռւում ոչ մի փոփոխութիւն չէ նախատեսնվում։ Կառավարութեան համար ոյժը անհրաժեշտ է, բայց արդիւնաւէտ է նա միայն այն ժամանակ, երբ կը կանգնէ օրինականութեան հաստատուն հողի վրա, երբ ոյժի ջատագովութիւնը հիմնված է ոչ թէ նրա վրա, որ նա ոյժ է, այլ նրա վրա, որ նրան զուգակցվում է իրաւունքը։ Կառավարութիւնը ասպարէզ եկաւ կռուի նախկին միջոցները առաջարկելով։ Ես կրամօլայի երդուեալ թշնամիներից մէկն եմ, այն կրամօլայի, որ մեզ՝ Ռուսաստանը վերածնված տեսնելու ցանկացողներիս ահագին հիասթափութիւններ տուեց։ Կը յիշեմ ես ձեզ Բիսմարկի խօսքերը. «Յեղափոխական շարժման ոյժը ոչ թէ նրա պարագլուխների ծայրայեղ վարդապետութիւնների մէջն է, այլ այն չափաւոր պահանջների բաժնում, որոնց իր ժամանակին բաւարարութիւն չը տրվեց»։ Այդ չափաւոր պահանջները խոստացված են մանիֆեստում, նրանց հարկաւոր է բաւարարեցնել։ Դուք, մոռանալով նրանց մասին, մոռանալով ձեր խոստումների մասին, կրկին ոյժի մասին էք խօսում։

Մինիստրների Խորհրդի նախագահը յայտնեց, որ հարկ չի լինի ժամանակաւորապէս կանգնեցնել դատարանը։ Եթէ հարկ չի լինի, ապա ինչո՞ւ խօսել նրա մասին։ Դատարանի գործունէութեան մէջ մի արգելք կայ, որ ստիպում է նրան այնպիսի սխալներ գործել, որոնց համար մենք նրանց այնպէս դառնութեամբ կշտամբում ենք։ Դրա պատճառը—դատարանի ոչ լիակատար անկախութիւնն է։ Պէտք է բոլորին անխտիր ասել, որ հոկտ. 17-ի մանիֆէստը Ռուսաստանում ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի բան, որ կանգնած է վէճերից, ցնցումներից դուրս։ Այդ մի բանը—օրէնքն է։ Սպառնալով կանգնեցնել դատարանի անփոփոխելիութիւնը, սպառնալով օրէնքի [illegible], դուք [illegible] էք պետականութեան գլխաւոր սիւնը։

Մինիստրների Խորհրդի նախագահը անհրաժեշտ համարեց, որպէսզի պետութեան սանդուղքի բոլոր աստիճաններում, կառավարութեանը ծառայող ամբողջ չինովնիկութեան մէջ չը լինի ոչ քաղաքական գործունէութիւն, ոչ էլ ինտրիգներ։ Ծանօթ խօսքեր... Անկուսակցականութեան դրօշակով մեզ մօտ ծածկվում են միայն որոշ գոյնի տենդենցիօզ կուսակցականութիւնը։ Այդ խօսքերով, այդ տենդենցիօզութեամբ դուք սպառնում էք դատաւորներին։

Չեմ կամենում այլևս քննադատել Մինիստրների Խորհրդի նախագահի դեկլարացիայի առանձին կէտերը. մենք այդ կանենք այն ժամանակ, երբ օրէնքը կը քննադատենք։ Բայց ես ուրախ կը լինէի, եթէ մեզ այս րօպէիս ասէին. «Ձեր երկիւղները իզուր են, այդ բոլորը գուցէ ձեր նախազգուշականութիւնն է, կամ գուցէ անուշադրութիւնը։ Կառավարութեան գործը և նրա գլխաւոր նպատակն է՝ լիակատար կերպով, մինչև վերջ, իրականացնել այն բոլորը, ինչ-որ խոստացված է մանիֆէստով, իրականացնել այն բոլոր ազատութիւնները, որոնց մասին խօսեցին, իրականացնել կառավարութեան յաջորդական դեմօկրատիզացիան»։ Եթէ մեզ կասեն, որ մեր մէջ եղած տարբերութիւնը սոսկ մանրամասնութիւնների մէջ է կայանում, որ մենք կանգնած ենք միևնոյն հողի վրա, այն ժամանակ ես կողջունեմ նրան, ով այդ կասէ։ Բայց եթէ այդ չասէք, վախենում եմ, որ ոչ մի համերաշխութիւն չը կայանայ նրանց մէջ, ով ցանկանում է ծառայել հոկտ. 17-ի մանիֆէստին, և նրանց մէջ, ով կամենում է նրանց մէջտեղից բարձել»։ (Ծափահարութիւններ)։

Պօկրովսկին (2-րդ) կարդում է սօցիալ-դեմօկրատների յայտարարութիւնը. «Պետական Դուման, որի առաջ ասպարէզ է գալիս այժմ մեր ֆրակցիան, յունիսի 3-ի Դումա է, այսինքն յեղաշրջման Դումա, որ ձգտում է սահման դնել Ռուսաստանի հանուր ազատագրական շարժման։ Ռուսաստանը կանգնած էր և մինչև օրս մնում է կանգնած իր վերածնութեան խնդրի առաջ, իր հասարակական և քաղաքական կեանքի բոլոր կարգաւորութիւնները արմատապէս փոփոխելու դժուարին աշխատանքի առաջ։ Ծորտութեան պաշտպաններից հողերը յանձնելու են ժողովրդական մասսաներին. անձի լիակատար ազատութիւն և վարչական կամայականութեան վերացումն. տեղական ինքնավարութեան և դատարանի դեմօկրատիզացիա, և այդ հաստատութիւնների վարչական խնամակալութիւնից ազատութիւն. ոչ ֆիկտիվ, այլ իսկական պաշտպանութիւն բանւորական դասակարգի և նրա կազմակերպութեան ազատութիւն և, ինչպէս բոլորի պսակը, բայց միևնոյն ժամանակ բոլոր այդ բարենորոգումների նախապայմանը—բիւրոկրատիայի իշխանութեան կործանումն և որ այդ իշխանութիւնը՝ ընդհանուր, ուղղակի, գաղտնի և հաւասար ձայնատուութեամբ ընտրված ժողովրդական ներկայացուցչութեան ձեռքը իսկապէս անցնի։ Պարզ է որ երկու Դումաների ներկայացուցչութիւնը անզօր էր լուծելու այդ խնդիրը ամբողջովին, բայց այդ ներկայացուցչութիւնը դուրս եկաւ ազատագրական կռուի բովից, ինչպէս ժողովրդի ձեռք բերած զէնքում, ինչպէս ժողովրդի տարերային մոլեգնութիւնը հանգստացնող միջոց։

Ուստի, դեկտեմբերի 11-ի օրէնքի լիակատար անկատարելութեամբ հանդերձ, չը նայած սենատի բացատրիչ «պրակտիկային», նա, բայց և այնպէս, Ռուսաստանի ազգաբնակութեան լայն խաւերի ներկայացուցչութիւն էր և, ինչպէս այդպիսին, նա իր դրօշակի վրա կրում էր այդ ազատագրական խնդիրները։ Երրորդ Պետական Դուման հակա-յեղափոխական Դումա է. (կենտրոնում և աջակողմում «բրաւօ»)։ Այն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

VIII

Խօսելով հայ գիւղերի ինտենսիվ և մտաւոր կուլտուրայի բացակայութեան, բարքերի և ընկերվարական կեանքի քաօսային դրութեան, ինչպէս նաև վաշխառութեան, հարստահարութեան, կաշառակերութեան մասին՝ անհնարին է մի քանի խօսք ևս չասել այդ բոլոր բացասական երևոյթների վրա անմիջականօրէն ու խորապէս ազդող կրօնա-միստիկական նախապաշարումների վերաբերմամբ։

Կարդացէք, ուսումնասիրեցէք կրօնների պատմութիւնը։ Այդ սառն, անօրգանական վարդապետութիւնները հիմնված են նապայման հաւատի վրա և համեմված արևելքի ճաճանչաւոր երևակայութեամբ, բանաստեղծական քնքոյշ և ֆանտաստիկական իլլիւզիաներով։

Եկան XIX և XX դարերը՝ դարեր գիտութեան և գեղարուեստի։ Պատառվեց դիմակը, և, վերջապէս, յաղթանակը տարաւ գիտութիւնը... Մարդկութեան բողոքող մտածողութիւնն ազատվեց խաւարի կապանքներից։ Բնական ու վերլուծական հոգին ասպարէզ նետվեց, հանդէս եկան նախկին հասարակական կազմը հիմնովին յեղաշրջող կապիտալիզմն ու խոշոր ինդուստրիան։ Այդ կապիտալիզմը ստեղծեց նոր արուեստ, նոր կուլտուրա, նոր աշխարհահայեացքներ։ Յեղաշրջվեց ամեն ինչ։ Հնութեան փոշին ծածկեց նախկին անպաճոյճ ստրկութիւնը և սրա պարզ պայմանները. վերջապէս կորցրին իրանց նշանակութիւնը մինչև անգամ ցեղակցական տրադիցիաները, կրօնը, հայրենիքը և այլն։

Մտէք հայ գիւղերը և տեսէք, թէ ինչ աննախանձելի և քաօսական իրականութեան մէջ է գտնվում հասարակական կեանքն այդտեղ։ Տեսէք «հայոց առաքելական կաթուղիկէ եկեղեցին» և նրա «արթուն հովիւն» ինչ դերի մէջ են և ինչ մութ ու անպատուաբեր գործեր են կատարում... Բայց ներկայ պայմաններում ո՞ր նոյնիսկ ըմբոստ անձը կը յանդգնի եկեղեցու և նրա «առաքելաշնորհ» պաշտօնեաների շահերին հակառակ գնալ. ո՞վ կը համարձակվի նրանց իսկական գոյնն ասպարէզի վրա դնել։ Չէ՞ որ այնուհետև եկեղեցու հայրերը՝ գիւղական վաշխառու, տղրուկ, բռունցքաւոր և ուրիշ զօրաւորների հետ մէջք-մէջքի տալով, մինչև անգամ աշխատաւոր մասսայի տգիտութիւնից էլ օգտվելով մասսայի կրօնական հիւանդ ու աննորմալ կրքերը ձեր դէմ կը լարեն... Այսօր բոլորիս համար փաստ է, որ հայ եկեղեցիների ու դպրոցների հսկայական հարստութիւնը, իրաւական և տնտեսական ամբողջ դեկը, դիւային տոկոսներով սրբված դրամների մուրհակները՝ առանց որևէ կօնտրոլի՝ այդ արտօնեալ դասակարգերի տրամադրութեան տակ են գտնվում, և նրանց անզուսպ ու շահամոլ քմահաճոյքների համեմատ էլ կառավարվում է այդ անթիւ «արիւն-քրտինքով» հաւաքված կոպէկների հարստութիւնը։ «Շանը պահապան են նշանակել պանրի տկին»։

Ինչ ասել կուզի, որ յիշեալ հարստութիւնը գիւղերի շահագրգիռ ու անզուսպ վաշխառուների ձեռքին միևնոյն ժամանակ մի կատարեալ կռուախնձոր է դառել։ Նրանցից հասնողը ուզում է «իւղալի» պատառն իր տրամադրութեան տակ վերցնել։ Այսպիսով՝ բարեբաղդաբար ասեմ թէ տարաբաղդաբար՝ գրեթէ ամենուրեք, գլխաւորապէս գիւղական խուլ անկիւններում, գիւղի «զօրբաների» շրջանում մի սուր տարաձայնութիւն է հանդէս եկել «կռուածաղիկ դարձած» եկեղեցա-վանքապատկան հարստութեան վերաբերմամբ։ Իսկ յաճախ էլ աւելի խոհեմները, իրանց շահերը քաջ ճանաչող գիւղի աղա հայրերը, նաղդ կերպով «եղբօր նման» իրանց մէջ փայ են անում եկեղեցիների ու ուխտատեղիների և վանքերի շարժական և անշարժ հարստութեան աշխատանքն էլ, իրաւունքն էլ...

Մի զարմանար, ընթերցող, որ այսօր հայ գիւղերի ամենամեծ վաշխառուն հայկական «անխօս» եկեղեցին է հանդիսանում՝ յանձին նրա անարժան հոգևոր հովիւների և գիւղի աղա տղրուկների։ Հարկ կա՞յ ասելու, որ այդքան (յաճախ 10—15—20,000-ի հասնող) եկեղեցական դրամները, 25—30—40%-ով տրվելով հանդերձ, տասնեակ տարիների ընթացքում, ինչպէս ասում են, ուղտի պոչի նման ոչ մեծացել և ոչ փոքրացել են։ Այդ՝ դեռ համեմատաբար բարեխիղճ հսկիչների ձեռքում. իսկ աւելի յաճախ՝ բաւական է, որ եկեղեցու կամ գիւղի համար մի որևէ նորոգութիւն՝ դիցուք մի սուաղ, մի քանի քար, վերջապէս մի գործ պատահի, և ահա արդէն ամեն ինչ կը վերջանայ, «քար կը գցեն եկեղեցու փողի գլխին»։ Եկեղեցին «կոտր» ընկաւ, մինչև անգամ մի քանի հարիւր րուբլի էլ պարտք մնաց։ Եկեղեցու մուրհակները, ցորենը, հողերը «շուն ու գէլի» բաժին դառան։ Եւ այդ շատ բնական է, քանի որ հայ եկեղեցիներն այսօր չունեն կօնտրօլ, քանի որ «հայ եպիսկոպոսունք» մի քանի տասնեակ րուբլի կաշառքի համար զանազան փայտիկտորների, չօբանների, «սև ու սպիտակ» իրարից չը ջոկողներին քահանայ են ձեռնադրում։ Ի զուր չէ ժողովրդական այն կծու ու վերին աստիճանի սրախօս դարձուածքը, որ ասում է. «Եթէ մարդ չը դառնամ, հօ տէրտէր կը դառնամ»։

Այո, այդ բոլորին վերջ կարող է տալ միմիայն ապագայ գիտակից ժողովրդական մասսան։

Եկեղեցական փողերի դիւային %-ների պատճառով Նիժում (ինչպէս նաև ուրիշ շատ գիւղերում) աղքատների, որբերի, այրիների, թշուառների ձեռքերում մալ, ապրանք, արտ, այգի, չուլ ու փալաս չը մնաց, մինչև անգամ կտուրների քիրամիդները խլվեցին։ Հարկ կա՞յ ասելու, որ խլված հողերի, այգիների ամենալաւ մասը նոյն տղերքի ձեռքն է անցնում։ Մեր ասածներն ապացուցանելու համար չափազանց առատ օրինակներ կան, որոնք անհերքելի կերպով ցոյց են տալիս, թէ ինչպէս եկեղեցիների անշարժ կալքերի ամենալաւ մասը խլվել է գիւղի զօրբաների կողմից։ Հէնց օրինակ վերցնենք Նիժ աւանի 4 եկեղեցիների կարողութիւնը (նրանցից իւրաքանչիւրը ունի 10—15,000 ր. կարողութիւն՝ մօտ 30—40%-ով տրված)։ Ո՞ւր են գնում այդ դրամները։ Չէ՞ որ այդ փողերը մի քանի տարվայ ընթացքում (այդ տոկոսներով) հսկայական գումարների են հասնում։ Եւ գիտէ՞ք այսօր այդ հարուստ եկեղեցիներն ինչ անշուք վիճակի մէջ են գտնվում. ոչ արդուզարդ, ոչ մինչև անգամ կանոնաւոր դռներ, փականքներ չէք ճարի Նիժի հարուստ եկեղեցիներում։ Եղածը՝ մի խաչ, մի աւետարան և մի ժամագիրք է, որ երեկոները, խուրջինի մէջ դրած, քահանաները թարաքեամի նման իրանց հետ են տանում տները։ Այդ է պատճառը, որ Նիժի ս. Եղիշէի եկեղեցում պահված Գ. և Ե. դարերից մնացած մի քանի ամենաթանգագին ու հետաքրքրական եկեղեցական հնութիւններ թուրք աւազակների շահագործութեան զոհ են դառնում և գողացվում են հէնց նոյն եկեղեցուց։ Այսպէս, ուրեմն, հոգևորականութիւնը, շնորհիւ շահամոլ, ագէտ և բաղդախնդիր լինելու, թէ եկեղեցու և թէ իր բարոյական հեղինակութիւնը միանգամայն կորցրել է ժողովրդի առաջ։ Հոգևորականութիւնն այսօր ոչ թէ միայն չէ կանգնած իր կոչման բարձրութեան վրա (ըստ չափաւոր լիբերալների), այլ դրականապէս շեշտում և ընդգծում եմ, որ այդ դասակարգն իր անվայել կաշառակերութեամբ, օրինակատարութեան ժամանակ արած նողկալի սակարկութեամբ, մտքի և հոգու մերկութեամբ և ձրիակերական անզուսպ զգացմունքներով՝ աւելի ստոր մակերևոյթի վրա է կանգնած քան բուն ժողովուրդը, քան իր անհովիւ հօտը։ Մեր հոգևորականութիւնը, որ բացարձակապէս անգիտակից է ժամանակակից պահանջների ու ցաւերի մասին, գոնէ նախկին՝ թէև միստիկ, բայց այնքան անկեղծ ու վառվռուն կրօնական զգացմունքներն էլ չունի, որոնցով գոնէ երբեմն եկեղեցու բեմից իր լքված ու հիւծված հօտին հոգևոր-բարոյական մխիթարութիւն կարդար։ Այո, գոնէ անկեղծ զգացմունքը որոշ տեսակէտից յարգելի է։ Մեր հոգևորականների միակ խօսակցութեան առարկան, ոգևորութիւնն իրանց անձնական նեղ ու գծուծ շրջանակից այն կողմը չէ անցնում։ Տարաբաղդաբար այդ պակասութիւնից մինչև անգամ «ինտելիգենտ» քահանաներն էլ զերծ չեն մնում։

Քահանաները յաճախ շաբաթներով և մինչև անգամ ամիսներով եկեղեցու երես չեն տեսնում։ Իսկ փոխարէն՝ համեցէք քահանայապատկան 1 դայիղ ցորեն և 1 դայիղ բրինձ մի տաք. համեցէք ննջեցեալի, մկրտութեան, պսակի վարձը, ժառանգաւոր կաշին, մսի բուդը նաղդ մի տաք և տեսէք, թէ ինչ սպառնալիքներ, անէծքներ, մինչև անգամ «ժամադուռնիր» ասպարէզ կը գան։ Հաւատացէք, որ Նիժի քահանաներն այդպիսի տուրքերի համար մինչև անգամ դատաւորների դռներն են մաշում, դատաւորների «զանկը» տանում... ծխականների կալքերն ու հողերն են այդ հարկերի փոխարէն խլում... Շատ զգալի է մանաւանդ պսակադրամների (կամ ուրիշ օրէնքների) անարգ սակարկութիւնը։ Դիցուք ամոլը եկեղեցի է եկել, կամ թէ չէ՝ հարսանիքի բոլոր պատրաստութիւնը տեսնված՝ գործակալից պսակի իրաւունք են խնդրում։ Ինչ ասել կուզի, որ մեր քահանաները՝ ինչպէս մի հմուտ ու ճարպիկ վաշխառու կամ չարչի՝ հանգամանքից օգտվելով պսակվողների ամենանուրբ «դամարը» բռնում են։ Զայրոյթից քիչ է մնում որ մարդ խելագարվի։ Դու՝ թէ բան չունես՝ հազար ասա, որ այդքան փող տալ չես կարող, աղքատ ես... Քահանան ոչ մի խօսք, ոչ մի պատիւ, խիղճ ճանաչել չը գիտէ։ Նա ասում է. «Այսքան փող կը տաս՝ տուր, թէ չէ՝ ոչ կը պսակեմ, ոչ էլ պսակի իրաւունք կը տամ»։ Խեղճ գիւղացին գոնէ որոշ զարգացում և կրթութիւն էլ չունի, որ իր կրծքի բուռն զայրոյթով աղաղակէ, թէ վերջապէս ժամանակն է բարեկարգութեան։

Արամ Գիւրջեան

իշխանութեան Դումա, որ ոտքի կանգնեց իր կրած պարտութիւնից· (ծափահարութիւններ աջակողմում և կենտրոնում). և դրա հետ միասին արտօնեալ փոքրամասնութեան Դումա, որ (փոքրամասնութիւնը) շահագրգռված է, որ Ռուսաստանի վերանորոգութիւնը տեղի չունենայ։ Ամբողջ ազգութիւններ զրկված են իրանց ընտրողական իրաւունքներից, ժողովրդի լայն մասսաները քաղաքական ներկայացուցչութեան դրսում մնացին։ Այդ պատճառով այս Դումայի լօզունգն է խեղդել ազատագրական շարժումը, և նա իր հերթական աշխատանքըն է դրել աւելի կամ պակաս բացարձակ ռէակցիայի քաղաքականութիւնը։

Ձեռնարկելով իր գործունէութեան երրորդ Դումայում, սօց.-դեմօկրատ. ֆրակցիան ճշգրտօրէն գիտակցում է այն դրութիւնը, որ ստեղծվել է նրա՝ իբրև պրօլետարիատի և Ռուսաստանի ազատութեան բոլոր ձգտողների ներկայացուցչի համար, ֆրակցիան չի հրաժարվի Դումայի ներսում կատարվող կոմբինացիաներից օգտվել, որպէսզի Դումայի մեծամասնութիւնից կորզի ինչ որ կարելի է՝ յօգուտ ազատագրական շարժման՝ առհասարակ և մարտնչող պրօլետարիատի՝ մասնաւորապէս։ Ժրաջանութեամբ աշխատելով դումայական աշխատանքում և ընդարձակ չափերով օգտվելով հարցապնդումների իրաւունքով, ֆրակցիան կաշխատէ, որ իր ձայնը հնչէ Ռուսաստանի ամբողջ տարածութեան վրա։ Արհամարհանքով վերաբերվելով թշնամիների գրպարտութիւններին, ֆրակցիան, ինչպէս սօցիալիստական պրօլետարիատի միջազգային մեծ զօրքի ռուսական խմբակը, կընթանայ դէպի իր միակ նպատակը՝ դէպի սօցիալիզմ դեմօկրատական կազմով»։

(Կը շարունակվի)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

◆ Նոյեմբերի 15-ին, գիշերը շատ ուշ, հոկտեմբերեանների մէջ լուր է տարածվել, որ ծայրայեղ աջակողմեանները բացի Ցարսկոյէ Սելօ առանձին ուղերձ ուղարկելուց՝ կայսրի անունով ուղարկել են նաև մի հեռագիր, որտեղ նրանք յայտնում են, որ իրանք չեն կարող գործել Դումայում ոչ միայն ձախակողմեանների հետ, այլ և հոկտեմբերեանների հետ, որոնք ոչ պակաս խռովարկուներ դուրս եկան, քան կադետները։ Այդ հեռագիրը երեկոյեան տեղի ունեցած ծայրայեղ աջակողմեանների և չափաւոր աջակողմեանների միացեալ խորհրդակցութեան հետևանքն եղաւ, որոնք խիստ կերպով տարակարծիք հանդիսացան դէպի դեկլարացիան և նրա քննադատութիւնը՝ ունեցած իրանց հայեացքներով։ Այդ հեռագիրն ստորագրել են 100-ից աւելի պատգամաւորներ, ի թիւս որոց կոմս Բօբրինսկի, Պուրիշկեվիչ, Եւլօգի, Վետչինին և ուրիշները։ («Тов.»)

◆ Աջակողմեանների մէջ խօսում են, որ արդարադատութեան մինիստրը պահանջել է ժամանակաւորապէս հեռացնել պատգամաւոր Կօլիւբակինին Պետական Դումայից։ Նոյեմբերի 15-ին ժուռնալիստներից մէկի հետ խօսելիս Պուրիշկեվիչը յայտնել է, որ այդ պահանջը ոչ մի օրինական հիմք չունի, ուստի և աջակողմեանները չեն պնդի այդ պահանջի իրագործման վրա։ Ինչ վերաբերում է իրան Պուրիշկեվիչին, նա նոյնիսկ պաշտպանել է Կօլիւբակինին, ասելով որ՝ քանի արդարադատութեան մինիստրի պահանջը օրինական տեսակէտից այնքան հիմնաւորված չի լինի, որպէսզի այլևս կարելի չը դառնայ բողոքել նրա ժամանակաւոր հեռացման դէմ, աջակողմեանները ձայն կը տան հակառակ նրա հեռացման։ («Тов.»)

ԷՋՄԻԱԾՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

(Սեփական թղթակցից)

II

Այժմ տանք վերջաբանը։

Պատգամաւորներից շատերը, մանաւանդ նրանք, որոնք առաջին անգամ էին ոտք դնում Էջմիածին, հիասթափված գնացին։

— Ո՛չ մի բարեկարգութիւն, ո՛չ մի կարգապահութիւն. կարծես աւերակների մէջ լինենք,—ասում էին նրանք։

Տեսարանը հրապուրիչ չէր վանքի պարիսպների մէջ, չը հաշուելով մատենադարանն ու թանգարանները, իսկ պարիսպներից դուրս՝ գիւղի և վանքի միջև լճացած տիղմն էր անհրպետում։ Բաղդը, նորեկ հիւրերի համար ներկայ ճանապարհորդութեան ընթացքում, կարծես անյարմարութիւններ էր միայն ստեղծել։ Պէտք է իջնէին Էջմիածնի կայարանում. նրանց մեծ մասը ստիպված եղաւ գնալու Երևան և ապա այնտեղից՝ Էջմիածին։ Իսկ Երևանում՝ կեղտոտութիւնից, փչացած փողոցներից, մանաւանդ ցեխից բացի ուշադրութեան արժանի որևէ ուրիշ մի բան չէին կարող տեսնել նրանք։ Երևի նրանց յիշողութեան մէջ այսօր մնում է մի թարմ տպաւորութիւն, մի ճնշող համոզմունք, թէ Երևանը ասիականութիւնից դեռ երկար ժամանակ հրաժարվելու մտադրութիւն չունի։

Բաղդը չէր ժպտում Էջմիածնի կայարանում իջնողներին էլ. ուղիղ կէս վերստ տարածութիւն, իրանց ճանապարհորդական իրեղէններով պէտք է քարշ գային նրանք, անցնէին ցեխերի միջից՝ կառք նստելու համար։

Հաղորդակցութեան յարմարութիւնների մասին հոգ տանող չը կար։ Երկաթուղային վարչութիւնը, գոնէ շրջանամասի կառավարիչը, չը գիտեմ ինչով էր հետաքրքրվում այն ժամանակ, երբ մի ամբողջ կայարան համարեա փակել էր իր մուտքը ահագին շրջանի ազգաբնակչութեան առաջ։ Մօտ 150 քայլ տարածութիւն ճանապարհը թաղված է մի արշինից աւելի խորութեամբ ջրի տակ։ Այնպիսի մի տեսարան, որը կատարվում էր այդ փոքրիկ տարածութեան վրա՝ երկաթուղու վարչութեան անփութութեան շնորհիւ, հազիւ թէ տեսած լինէին մեր պատգամաւորները ուրիշ տեղերում։

Մինչև այժմ էլ այդ անանցանելի լճի մէջ թաղված և ցուռկը վեր ցցած բողոքում է խեղճ գիւղացու ջարդ ու փշուր եղած սայլը։ Ասում են՝ այդտեղ անասուններ էլ են փչացել։ Հէնց այսօր ես ինքս էլ ականատես էի մի վերին աստիճանի վրդովեցուցիչ տեսարանի, և թղթակցութիւնս գրում եմ ճնշող փաստերի տպաւորութեան տակ։ Այս սաստիկ ցրտերին մի քանի գիւղացիներ, մինչև գօտկատեղը ջրի մէջ մտած, աշխատում էին ճանապարհից շեղված ու կողքի առուի մէջ թաղված սայլը դուրս հանել։ Եզներից մէկի գունչը համարեա հաւասարվել էր ջրի մակերևոյթին։ Ամբողջ երեք ժամ չարչարվելուց յետոյ, մի քանի զոյգ եզներով և 5—6 մարդկանց օգնութեամբ հազիւ միայն կարողացան ազատել և դուրս հանել եզներն էլ, բեռն էլ, սայլըն էլ։

Այդ փորձանքների առաջն առնելու համար, ինչպէս լսեցի, գծի շրջանի կառավարիչը կարգադրել է ժամանակաւորապէս թոյլատրել, որպէսզի սայլերն ու կառքերը անցնեն գծին կպած նեղ շերտի վրայով։ Եւ ահա վերևում նկարագրված տեսարանի հետ միաժամանակ այդ շերտի վրա էլ կատարվում է մի ուրիշ ոչ պակաս վրդովեցուցիչ աշխատանք, կարծես, ներդաշնակութիւն պահպանելու նպատակով։ Մի քանի սայլեր անցնում էին այդ նեղ ճանապարհով. եզները՝ քաշ ու քրտինքի մէջ կորած, մինչև ծնկները խրված կպչուն ցեխի մէջ, քարշ էին գալիս դէպի առաջ, ուժասպառ ընկնում էին սրտնեղված սայլորդների ճիպոտի հարուածների տակ, վեր թռչում՝ նորից ընկնում, նորից բարձրանում և դարձեալ մի քանի մարդկանց օգնութեամբ ակօսում ցեխը և դուրս գալիս այդ տարտարոսից։

Եւ անզօր գիւղացիները անէծքներ էր որ թափում էին...

Այդպիսի պայմաններում ժողովուրդը աւելի գերադաս է համարում իր բերքի արտահանութիւնը կամ կանգնեցնել և կամ կատարել Երևանի վրայով։

Երկաթուղու վարչութեան համար դժուար բան էր, միթէ, մի քանի վագօն աւազ բերել տալ և, վերանորոգելով այդ ճանապարհը, կանոնաւորել երթևեկութիւնը այդ կայարանի հետ։

Շրջանի գիւղացիութիւնը սրտատրոփ սպասում է մի այդպիսի կարգադրութեան. ապա թէ ոչ մօտալուտ ձմեռը, երբ ջրերը և գետինը կը սառցապատվեն, բոլորովին անանցանելի կը դարձնէ այդ ճանապարհը և բնականաբար արտահանութիւնը Էջմիածնի կայարանի միջոցով կընդհատվի։ Մեզ ասացին, որ երկաթուղու գլխաւոր կառավարիչը այդ առիթով նկատողութիւն է արել շրջանամասի կառավարչին և հրամայել է կարգի բերել ճանապարհը։ Ուղիղ է այդ թէ ոչ, ես չը գիտեմ։ Յամենայն դէպս ճանապարհի դրութիւնը մինչև այսօր էլ մնում է անփոփոխ։

*

Պատգամաւորները Մասիսից էլ դժգոհ գնացին...

Ամպերի մէջ թաղած իր ալևոր կատարը՝ նա չուզեց բաց ճակատով երևալ նորեկ ճանապարհորդներին, չուզեց հրճուանք ազդել, ոգևորել նրանց իր հսկայ տեսքով։

— Մասիսն էլ է խռովել մեզնից,—մտածում էին շատերը։

— Գալ մինչև այստեղ և Մասիսը, ինչպէս հարկն է, չը տեսնել,—ասում էին ափսոսանքով ուրիշները և դժգոհ տրամադրութեամբ հեռանում այստեղից։

Իսկ Մասիսը իր շրջապատի հետ միասին կանգնած էր իր տեղում անշարժ, անզգայ ու անկարեկից։

*

Այս թղթակցութեամբ ամփոփում եմ իմ տեսածներն ու լսածները։ Հասարակական կարևորութիւն ունեցող միւս խնդիրների նկատմամբ, որոնք վերաբերում են տեղիս հաստատութիւնների դրութեանը, ինչպէս վանքի, ճեմարանի, տպարանի և այլն, կաշխատեմ հաղորդել իմ դիտողութիւնները մի ուրիշ անգամ, Թիֆլիս վերադառնալուց յետոյ։

Լ. Դանիէլեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Նոյեմբերի 26-ին Երևանի նահանգական դատարանում քննվելու է մի խումբ իգդիրցի երիտասարդների գործը, որոնք մեղադրվում են սպանութիւնների մէջ։ Մեղադրեալների նստարանի վրա են՝ Վահան Աւագեան, Ղարիբեան, Աբրահամեան և Աթայեան։ Սպանված է Իգդիրի դատարանի գործավար Բագրատ Յարութիւնեանը։ Այդ սպանութիւնը, որը իր կողմից առաջ բերեց մի ուրիշ եղեռնագործութիւն, չափազանց յուզել է ամբողջ Իգդիրի հասարակութիւնը, մանաւանդ սպանութեան զոհ է գնացել մի համեստ և աշխատասէր մարդ։ Մի շարք վկաների ցուցմունքով՝ Բագրատ Յարութիւնեանի սպանութիւնը կատարվել է շահագործական հողի վրա։

Սպանված գործավար Յարութիւնեանի օգնական Աթայեանը ամեն ջանք գործ է դնում հեռացնել տալ Յարութիւնեանին և բռնել նրա պաշտօնը։ Իր այդ ցանկութիւնը և միտքը նա յայտնել է մի քանի անգամ ընկերական նեղ շրջաններում։ Նա յայտնել էր նոյնիսկ իր պատրաստականութիւնը վճարել 100 ր. այն մարդուն, որը կաջողեցնէ Յարութիւնեանից ազատվելու և նրա պաշտօնը բռնելու համար։ Իր դաժան նպատակին հասնելու համար՝ Աթայեանը և իր ազգական Աբրահամեանը դիւային միտք են յղանում կազմակերպել Բագրատ Յարութիւնեանի սպանութիւնը, տալով այդ սպանութեան յեղափոխական ակտի կերպարանք և այդպիսով հեռացնելով որևէ կասկած իրանցից։ Այդ դժոխային միտքը իրագործելու համար, նրանք որսում են 18 տարեկան պատանի Ղարիբեանցին և հարբեցնելով նրան ներշնչում են, որ նա կոչված է կատարել մի մեծ յեղափոխական դեր։ Օգտվելով ժամանակի յեղափոխական հովերից, որով ոգևորվում էին շատերը, Աթայեանը գործիք է դարձնում Ղարիբեանին և հասցնում է նրան մարդասպանութեան, և եղեռնագործութիւնից յետոյ միայն պարզվում է գործի ամբողջ ստորութիւնը։ Աթայեանի ձգտումը՝ տալ այդ սպանութեանը տերրորիստական կերպարանք՝ չէ աջողվում։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, քննելով կատարված սպանութիւնը, մի յատուկ թռուցիկով Իգդիրի կենտրոնական կոմիտէի կողմից յայտարարում է, որ Յարութիւնեանը զոհ է Աթայեանի ստոր շահադիտական միտումների, և որ այդ սպանութիւնը ոչ մի կապ չունի Դաշնակցութեան հետ։ Ղարիբեանց պատանին, որը իր ատրճանակով վերջ է տուել մի անմեղ մարդու կեանքին, խոստովանել է իր արածը, ասելով որ նա ատրճանակ պարպելու րոպէին նոյնիսկ չը գիտէր ինչի և ում պէտք է սպանել։

Այդ փաստերի հիման վրա՝ Ղարիբեանցը իր ընկերներ Աւագեանի և Աբրահամեանի հետ մեղադրվում են նախամտածած սպանութեան մէջ, իսկ Աթայեանը մեղադրվում է որպէս դրդիչ և սպանութիւնը ներշնչող։

Աւագեանին և Ղարիբեանին պաշտպանում էր երդուեալ-հաւատարմատար Յովսէփ Ղօրղանեան։

—

Նոյեմբերի 19-ին կովկասեան զինուորական-նահանգական դատարանում քննվեց գիւղացի Ցիպարուլաշվիլու գործը, որ մեղադրվում է մի քահանայի մահակով ծանր հարուածներ հասցնելու մէջ, որոնցից և նա մեռաւ։

Դատարանը մեղադրեալին դատապարտեց մահվան պատժի։

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Նշանաւոր երգչուհի Օլիմպիա Բօրօնատ Թիֆլիսում առաջին անգամն է։

Նա հանդէս եկաւ «Տրավիատա» օպերայում հինգշաբթի, նոյեմբերի 22-ին։

Մաքուր, քաղցրահնչիւն ձայն, քնքոյշ և նուրբ դայլայլիկներ, մտածված և զգացված խաղ—ահա գլխաւոր յատկանիշները երգչուհու։ Բօրօնատը երգում է թեթև, անբռնազբօս, փոփոխելով ձայնի արտայայտութիւնը ազատօրէն, իջեցնելով նրան մինչև անլսելի լինելը և բարձրացնելով մինչև բարձր նօտաները։ Նրա ձայնը այնքան էֆֆէկտային, ազդու ու զրնգ ձայն չէ, որքան քնքոյշ, փայփայող, ախորժալուր և լաւ մշակված։ Երգչուհին արժանացաւ բուռն ծափահարութիւնների և ստացաւ 2 պսակ։

Ալֆրեդի դեր կատարող Մախին և Ժերմոնի դեր կատարող Պավլովսկին երգեցին գեղեցիկ կերպով, ճաշակով և տուին օպերային ներկայացման հաճելի ամբողջութիւն։

Թատրոնը ծայրէ-ծայր լիքն էր։

Այսօր Բօրօնատը հանդէս կը գայ «Սևիլիայի սափրիչ» օպերայում։

Սիրող

II

Հինգշաբթի, նոյեմբերի 22-ին, ռուսաց դրամատիկական խումբը, տիկին Եավորսկու մասնակցութեամբ, ներկայացրեց «Սև Ագռաւներ» նոր պիէսան, հեղինակութիւն Պրօտօպօպովայի, որ գրաւել էր թատրոնը հանդիսականների ահագին բազմութիւն։

Պիէսան մերկացնում է այն արկածախնդիրների իսկական կերպարանքը, որոնք օգտվելով ռուս հասարակ ժողովրդի, մասնաւորապէս կրօնասիրական, բարեպաշտական ջերմեռանդ զգացումներից՝ անամօթ կերպով շահագործում են այդ զգացումներն իրանց սեփական շահերի և գրպանի համար։ Պիէսայի մէջ դուրս են բերված այդ շահագործող տիպերը, և նրանց մէջ գլխաւորը, որ «սուրբ ուսուցիչ» է կոչվում և քօղարկված կերպով մերկացվում է մի նշանաւոր քարոզչի սխրագործութիւնները։ Մեծ աջողութիւն ունեցան տիկին Եավորսկայա, Կ. Շօրշտէյն և տիկին Մելգունովա։

Տեսնելով բեմի վրա այդ պիէսը, մարդ բացականչում է. «Դեռ ո՜րքան խաւար է տիրում Ռուսաստանում, ո՜րքան պէտք է աշխատել այդ մեծ խաւարը պատռելու համար»։

Հ. Ա.

III

Դէրասանուհի տիկ. Մայսուրեանի բենեֆիսը կը կայանայ երկուշաբթի, նոյեմբերի 26-ին, Արտիստական ընկերութեան թատրոնում։ Կը ներկայացվի առաջին անգամ հայոց բեմի վրա Միրբօյի յայտնի պիէս «Ժան-Ռուլը», որ երկար ժամանակ արգելված էր և միայն հայոց դրամատիկ ընկերութեան վարչութեան մասնաւոր միջնորդութեամբ ստացվեց թոյլտուութիւն։ Պիէսի նիւթը ժամանակակից իրողութիւններից է վերցրած. հեղինակը շօշափում է մեր կեանքի հիւանդոտ հարցերը։

IV

Զուբալովի ժողովրդական թատրոնում նոյեմբերի 21-ին կայացաւ ժողովրդական համերգ գրական բաժնով։ Համերգը բաղկացած էր թէ խմբական և թէ սօլօ բաժիններից։ Համերգին մասնակցում էին օպերային երգիչներ և երգչուհիներ։ Խմբականը բաղկացած էր ռուսերէն և վրացերէն երգերից, որոնք շատ ներդաշնակ անցան և կրկնվեցին ներկայ եղողների խնդրանօք։ Բոլոր սօլօ երգերը և պ. Քափանակեանի հմտութեամբ արտասանած ռուսերէն լեզուով ոտանաւորները շատ աջող անցան և հանդիսականների բուռն ծափահարութեան արժանացան և նոյն հասարակութեան խնդրանօք ամեն մէկը մի քանի անգամ կրկնվեցին։

Տեղերի գները մատչելի էին, բացի 1, 2, 3, 4 և 5 կարգերից, որոնց գները տասը կոպէկից բարձրացած էին 50 կ.։

Դահլիճի ցրտութեան պատճառով մարդիկ նստած էին տաք վերարկուներով և կրկնակօշիկներով։ Այդ անյարմարութեան առաջը պիտի առնել, որով կը վերանայ յաճախողների արդարացի տրտունջը։

Դահլիճը լիքն էր։

Z.

ԹՈՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք՝ 1) Վարշավայից Յ. Գ. Բագրատեանից, Հայրիկի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն՝ 5 ր., 2) Առաքել Վարդապետեանից 5 ր.։ Ընդհանուր գումարը նախկին ստացվածների հետ 2120 ր. 57 կ.։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Սղնախ, 20 նոյեմբերի

Աշխարհս արեան ծով է դարձել. ամեն տեղից յուսահատ ձայներ ենք լսում, մեծ մասամբ անմեղների կորուստ։ Այս ազատագրական շրջանում ապրողներս, ինչպէս երևում է, դեռ շատ և շատ ցաւալի տեսարանների և անախորժ լուրերի պէտք է հանդիպենք զանազան յեղափոխական կուսակցութիւնների անունով երևան եկած շանտաժիստների շնորհիւ։ Մի ժամանակ թէ այստեղ և թէ շրջակայքում կողոպտիչների մի խումբ բուն էր դրել, բայց շուտով ցիրուցան եղաւ շնորհիւ տեղիս սօց.-դեմօկրատների կտրուկ ազդարարութեան։ Առայժմս Սղնախը, համեմատած ուրիշ գաւառական քաղաքների հետ, փոքր ինչ հանգստութիւն է վայելում և ժողովուրդը խաղաղված է։

Այստեղ առևտրական և այլ դասակարգերի գործակատարները յաճախ գործադուլ են անում։ Վերջին ժամանակս այստեղի գինեվաճառների գործակատարները ամբողջ մի շաբաթ գործադուլ էին արել, մինչև որ նրանց պահանջներին զիջան խանութատէրերը։

Ամսիս 17-ին և 18-ին բարեգործական նպատակով քաղաքումս երկու երեկոյթ տեղի ունեցաւ։ Երկուսի էլ նախագահողներն էին՝ օր. Ա. Սարգսեան և Սէրգօ Լիսինեան։ Երկու երեկոյթն էլ լաւ անցկացան շնորհիւ նախագահողների անխոնջ եռանդի։ Այդ երեկոյթներից առաջինը տեղիս հայոց օրիորդաց դպրոցի օգտին էր տրված, իսկ երկրորդը՝ չքաւոր մի ընտանիքի օգտին։

Միմինօ

—

Մաստարա գիւղ (Էջմ. գաւ.), 19 նոյ.

Մաստարա գիւղը բաղկացած է մօտաւորապէս 300—350 տնից և չունի յարաբերութիւն ոչ Էջմիածնի և ոչ էլ Ալէքսանդրօպօլի հետ. բացի դրանից ընկած է հեռու հաղորդակցութեան ճանապարհներից, և, երիտասարդութեան թարմ ոյժերի բացակայութեան շնորհիւ, բնական է, որ դպրոց ունենալու մասին հոգ տանելն էլ աւելորդ է համարվել։

Դպրոց չունենալու հանգամանքից օգտվելով՝ տեղիս «խալիֆաները» իրանց առատ հունձն են անում լցնելով մատաղ սերնդի ուղեղը շարականներով ու սաղմոսներով։ Դեռ անցեալ 1906 թ. Մաստարայի ժողովուրդը դիմեց Էջմիածնի սինօդին (Մաստարան էջմիածնապատկան գիւղ է) և խնդրեց դրամական օգնութիւն, որպէսզի կիսատ մնացած դպրոցի շինութիւնը մի կերպ վերջացնի, բայց շինականներիս խնդիրը մերժվեց սինօդի կողմից։ Դրանից յետոյ՝ մնում էր որ ժողովուրդն իր սուղ միջոցներով վերջացնէ այդ շինութիւնը, բայց տեղիս տգէտ ու վաշխառու հոգաբարձութիւնը ժողովրդի արիւն-քրտինքով հաւաքած փողերի մի մասը իւրացրեց, իսկ միւս մասն ի չարը գործ դրեց, այնպէս որ դպրոցի շինութիւնը կրկին մնաց կիսատ։

Գիւղացիները յոյս ունէին այս 1907 թ. լրացնել այդ կիսատ մնացած շինութիւնը, սակայն այժմ էլ նրանց վառ յոյսերը ի դերև ելան, որովհետև տարվայ անբերրիութիւնը մեր գեղջուկին այնպիսի ծանր և անելանելի պայմանների մէջ է դրել, որ հազիւ նա կարողանայ իր ընտանիքի մասին հոգ տանել։ Թէև տեղումս կան հարուստներ, որոնք՝ եթէ ցանկանան՝ կարող են իրանց միջոցներով օգնել այդ շինութեան գործին, բայց միթէ հայ գիւղական հարուստը ընդունակ է այդպիսի մի վեհ գաղափար իրագործել և այն էլ Մաստարայի տգէտ ու աղքատ արեան ծծողը։

Եւ այսպէս՝ բազմաթիւ բնակիչներից բաղկացած Մաստարան, որի շրջակայքում կան և 5 անդպրոց հայ գիւղեր, չունի գէթ միդասեան մի դպրոց, որպէսզի իր մատաղ սերնդին բաւականութիւն տայ։

Ահա այս վերին աստիճանի տխուր հանգամանքն աչքի առաջ ունենալով, խնդրում ենք հայ ընկերութիւններին և բարեգործական հիմնարկութիւններին՝ չը խնայել օգնութիւն հասցնել մեր դպրոցի շինութեան գործին և օր առաջ ազատել մեր մատաղ սերնդին այդ «խալիֆաների» ճիրաններից։

Մ. Գէորգեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի 1-ին հաշտարար բաժնի հաշտարար դատաւորը, քննելով ոստիկանութեան ներկայացրած արձանագրութիւնները 1-ին քաղաքամասի հացթուխների մասին, որ հացը վաճառել են սահմանված սակագնից բարձր գներով, որոշել է իւրաքանչիւրին 25-ական ր. տուգանքի ենթարկել։ («Т. Л.»)

◆ Բագուի նահանգական դատարանը հաստատել է այս տարվայ մայիսի 15-ին վախճանված առաջին կարգի վաճառական Իլիա Գալուստեան Բուդաղեանցի կտակը, որ կազմված է 1898 թ. ապրիլի 25-ին և պատճէնը ուղարկված է բոլոր շահախնդիր անձերին և հաստատութիւններին։ Կտակի մէջ ի միջի այլոց ասված է. «Պարտաւորեցնում եմ հէնց նրանց, իմ ժառանգներին՝ կնոջս Սօֆիա Անտօնեան Բուդաղեանին և որդոցս Սուրէն և Սարգիս Բուդաղեաններին վճարել իբրև իմ կտակած— Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան տասը հազար րուբլի արծաթ, Բագուի հայոց մարդասիրական ընկերութեան հինգ հազար րուբլի արծաթ. Էջմիածնի ճեմարանին հինգ հազար րուբլի արծաթ, Էջմիածնի վանքին երեք հազար րուբլի արծաթ, Երուսաղէմի հայոց վանքին երկու հազար րուբլի արծաթ, Նորին սրբութիւն ամենայն հայոց կաթողիկոսին երկու հազար րուբլի՝ բարեգործական նպատակների վրա ծախսելու իր՝ նորին սրբութեան բարեհայեցողութեամբ, Բագուի աղքատ հայերի օգտին մի հազար րուբլի (այս գումարը ծախսելը և աղքատներին բաժանելը թողնում եմ իմ եղբայր Ենովք Գալուստեան Բուդաղեանցին), Բագուի հայոց եկեղեցիների օգտին՝ իւրաքանչիւրի համար վճարել մի հազարական րուբլի, Շամախու հայոց եկեղեցու օգտին երկու հազար րուբլի՝ Թիւրքահայաստանի անկարգութիւններից յետոյ մնացած հայ որբերի օգտին հինգ հազար րուբլի (այս գումարի գործադրութիւնն էլ յանձնում եմ իմ եղբայր Ենովք Գալուստեան Բուդաղեանցին) և, վերջապէս, Շամախում բացվելիք հայոց ծխական դպրոցների օգտին՝ վճարել 1500-ական րուբլի այդպիսի իգական և արական դպրոցներից իւրաքանչիւրին»։ 1906 թ. յունիսի 15-ի լրացուցիչ կտակի համաձայն միակ կտակարար նշանակված է հանգուցեալի կինը՝ Ս. Ա. Բուդաղեանցը։ («Б. Э.»)

◆ Նոյեմբերի 22-ին Երևանի արտակարգ գնացքով մեկնեց այն մասնաժողովը, որ Ջուլֆայի երկաթուղին ընդունել է անդրկովկասեան երկաթուղիների ցանկում։ Մասնաժողովի կազմի մէջ մտնում են երկաթուղիների կառավարիչ գեն.-մ. Նէյգէբաուէր, միւս կառավարիչները և ինժեներ Սորուվէ։ («Т. Л.»)

◆ Կովկասագիտական բարձր դասընթացքներում (Ալէքսանդրեան այգի) վաղը, առաւօտեան ժամը 11-ին, Գ. Թումանով կը շարունակէ դասախօսել Կովկասի ագրարային օրէնսդրութեան մասին. իսկ ժամը 12-ից Ա. Ֆոմին կը դասախօսէ բուսաբանութեան մասին։

◆ Ժողովրդական համալսարանի ռուսաց սեկցիայի նախաձեռնութեամբ նոյեմբերի 23-ից Աւճալեան փողոցի քաղաքային դպրոցում, Բոտէի շինութեան մէջ, № 110, կըսկսվեն սիստեմատիքաբար դասախօսութիւններ. կարդալու են տիեզերագրութեան մասին՝ Խ. Սեմէօնով, բնապատմութեան (природовѣдѣніе) մասին՝ Ա. Նիկոլսկի, օրէնսգիտութեան մասին՝ Ջ. Կալիշեվսկի, առողջապահութեան մասին՝ Գ. Վոլսկի, անատոմիայի և ֆիզիօլօգիայի մասին՝ Ֆէօդորով։ Ժողովրդական համալսարանի վարչութիւնը նահանգապետին արդէն խնդիր է ներկայացրել, որ համալսարանի կանոնադրութեան 2-րդ յօդուածի համաձայն սեկցիան բացված է։

◆ Այսօր 2-րդ արական գիմնազիայի շինութեան մէջ բժ. Ա. Խատիսեանը կը կարդայ իր դասախօսութիւնը «Ֆիզիօլօգիայի և առողջապահութեան հիմնական խնդիրները» թեմայով, երեկոյեան ժամը 7—8։

◆ Այն յատուկ յանձնաժողովը, որ ընտրվել էր «Ադելխանով և ընկ.» ակցիոներական ընկերութեան գործերը քննելու և նրան իբրև փոխատուութիւն 400,000 րուբլի տալու խնդիրը որոշելու համար, նոյեմբերի 21-ից ձեռնարկեց իր միսիան կատարելու։ («К.»)

◆ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան ծառայողները մինչև օրս չեն ստացել իրանց ռոճիկները գանձարկղում փող չը լինելու պատճառով։ Հաւանօրէն ռոճիկները կը տրվեն ամսիս վերջը։

◆ Մանկաբարձուհիներին փոխադարձաբար օգնող ընկերութիւնը որոշել է Թիֆլիսում բանալ կանանց ֆելդշերական դասընթացքներ։ («Т. Л.»)

◆ Զանազան տեղերից Թիֆլիսի լրագիրները շարունակ ցաւակցական հեռագիրներ են ստանում հանգուցեալ Չէյխ-ուլ-իսլամի մահվան առիթով, որով արտայայտվում է խորին վիշտ և անսահման ցաւ ճշմարտասէր և առաքինի հոգևորականի կորստի համար։

◆ Բարի մարդկանց ուշադրութիւնն ենք հրաւիրում 3-րդ իգական գիմնազիայի աշակերտուհի Օ. Խաչատրեանի ծայրայեղ թշուառ դրութեան վրա, որ ոչ մի միջոց չունի թէ գոյութեան և թէ ուսման վճարը տալու համար։ Եթէ դեկտեմբեր ամսին նա չը տայ իր ուսման վճարը, նա կարտաքսվի դպրոցից։ Նուէրները կարելի է ուղարկել «Մշակի» խմբագրութեանը՝ հասցնելու ըստ պատկանելոյն։

◆ Նոյեմբերի 22-ի գիշերը 9-րդ քաղաքամասում խուզարկել են Ահմեդաշվիլի եղբայրների բնակարանը։ Խուզարկութիւնից յետոյ ձերբակալում են Մատվէյ Ահմեդաշվիլուն։

◆ Նոյեմբերի 22-ին Նիկիտինի ցիրկի շէնքում կայացաւ պանդոկների, խմիչքեղէնների խանութների և նման հաստատութիւնների գործածող ծառայողների և տէրերի ու մի քանի մանր վաճառականների ընդհանուր ժողովը։ Երկար խորհրդակցելուց յետոյ վճռվեց ծառայողների բանուորական օրը որոշել 9 ժամ։ Իսկ ծագող վէճերը քննելու համար ընտրվեց մի յանձնաժողով։

◆ Պրէօբրաժէնսկի փողոցում, № 7 տանը ապրող Շերմազան Գլօկաշվիլին շանտաժիստներից ստացել է մի սպառնական նամակ 600 րուբլի պահանջով։

◆ Նոյեմբերի 22-ին, ցերեկվայ ժամը 2-ին, Պետրոպավլովսկի գերեզմանատնից ոչ հեռու, երեք չարագործներ կողոպտում են վաճառական Պետր Սուրէնկովին, որից կողոպտիչները յափշտակում են 150 րուբլու ապրանք։ Սուրէնկովը, Հալաբարում հանդիպելով մի պահակախմբի, օֆիցէրին յայտնում է եղածի մասին։ Պահակախումբը ընկնում է կողոպտիչների ետևից և գերեզմանատան մօտ տեսնելով փախչող երեք անյայտ մարդու, հրամայում է կանգնել, բայց նրանք շարունակում են փախչել, որի պատճառով պահակները կրակում են, որով կողոպտիչներից մէկը՝ Դաւիդ Բակուրաձէն սպանվում է. նրա մօտ գտնվում է «Սմիտ և Վիսօն» սիստեմի ատրճանակ. միւս կողոպտիչը՝ Բագրատ Այվազովը ձերբակալվում է, իսկ երրորդը կարողանում է փախչել։ Գողացված ապրանքի 2/3-րդ մասը գտնվում և յանձնվում է տիրոջ։ Այվազովին ատրճանակով ուղարկում են կօմենդանտսկի վարչութիւն, իսկ Բակուրաձէի դիակը Միքայէլեան հիւանդանոց։

◆ Թիֆլիսի գաւառի Սագարէջօ, Վաշլովանի, Երտիսի և Բօրչալօ, Ախալքալաքի գաւառի Աղաստանի, Բօրչալուի գաւառի Եագդան և Կօզօր գիւղերի բնակիչները պատշաճաւոր իշխանութեանը միջնորդութիւն են յարուցել՝ առաջինները խնդրում են տալ իրանց պետական ազատ արօտատեղիներ և հերկելու հողեր որտեղ որ լինի, երկրորդները՝ բանալ իրանց գիւղում օրիորդաց դպրոց, իսկ վերջինները՝ տալ իբրև փոխատուութիւն 2400 րուբլի սերմացուի համար գիւղատնտեսական ֆօնդից։ («Т. Л.»)

◆ «Бак. Эхо»-ն իբրև լուր հաղորդում է, որ Անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ գ.-մ. Նէյգեբաուէրը թողնում է իր պաշտօնը, իսկ նրա տեղ նշանակվում է Նիկօլայեվսկի երկաթուղու կառավարիչ փոխ-գնդապետ Պետրօվ։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոյեմբերի 21-ին, ցերեկվայ 4 ժամին, Գրիգօրիեվսկի միջանցքում անյայտ չարագործներ ատրճանակով տեղն ու տեղը սպանել են մի անյայտ տեղացի մարդու։ Սպանվածի դիակը ուղարկվել է Միքայէլեան հիւանդանոցը։ Սպանվածը եղել է գործակատար Գէորգ Յովհաննիսեանը։

—

Նոյեմբերի 21-ին, գիշերվայ ժամը 1-ին, ալէքսանդրօպօլցի Ռահիկ Գրիգօրեանցը յայտնել է ոստիկանութեան, որ նրա գալանտերէյնի խանութից, նման բանալիով բանալով, անյայտ չարագործներ գողացել են 200 րուբլու զանազան ապրանք։

—

Նոյեմբերի 21-ին, երեկոյեան ժամը 7-ին, Վելիկօկնեաժեսկի փողոցում ոստիկանութիւնը ձերբակալել է մի կասկածաւոր մարդու,—Գօրու գաւ. բնակիչ Նիկ. Քօսանաշվիլի,—որի մօտ խուզարկելիս գտել են փամփուշտներով լի 2 ատրճանակ, առանց վկայական ունենալու։ Քօսանաշվիլին բանտարկված է, իսկ խլված ատրճանակները ուղարկված են կօմենդանտսկի վարչութիւն։

—

Նիկօլայ Դիաչկօվը, որը հոկտեմբերի 30-ին սպանել էր իր եղբօրը, իսկ յետոյ անյայտացել էր, ձերբակալվել է Նօվօրօսիյսկում 2-րդ սպանութիւն գործելու համար։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Ներկայումս ֆինլանդական սէյմում, «Русь» լրագրի ասելով, հարց է յարուցված հրէաների բնակութեան իրաւունքի մասին Ֆինլանդիայում։ Վճռված է Ֆինլանդիայում ապրելու թոյլտւութիւն տալ միայն սենատի որոշմամբ և սենատի միջոցով։ Առանց սենատի վկայականի ապրելու համար ստացված անցագիրները համարվելու են անընդունելի։

◆ Նոյեմբերի 1-ին, Սամարղանդ կայարանում, 40 հոգի զինուորների հագուստով, երկու օֆիցէրի առաջնորդութեամբ, օրը ցերեկով շրջապատում են կայարանը, կապում դրամարկղի մօտ կանգնած պահապաններին և երեք դրամական արկղներից մէկը ջարդում են, իսկ միւսները վերցնում տանում։ Գողացված փողերի քանակը հասնում է 20 հազար րուբլու։ Զինուորնե՞ր են եղել նրանք, արդեօք, թէ՞ զինուորների հագուստ հագած ուրիշ մարդիկ, առ այժմ պարզված չէ։ Փողերից բացի, տարել են և երեք հրացաններ։ («Аст.»)

◆ Մօտ ժամանակներս կանանց պրօգրեսիվ կուսակցութեան ակումբը դիմել է Պետերբուրգի քաղաքապետին՝ խնդրելով թոյլ տալ իրան նոյեմբերի 15-ին և 22-ին դասախօսութիւն կարդալու հետևեալ նիւթերի մասին. «Ռուս կինը XIX դարի գրականական հոսանքներում», «Կանանց ազատագրական շարժումը առաջացնող շարժառիթները» և «Կանանց ազգային միութիւնը»։ Նոյեմբերի 13-ին քաղաքապետը գրաւոր կերպով մերժել է այդ խնդիրը։

◆ Պետերբուրգի կանանց պօլիտեխնիկական դասընթացների պրօֆեսօրների խորհուրդը խնդրամատոյց է եղել՝ դասընթացը աւարտողներին ինժեների կոչում շնորհելու մասին և նրանց ևս վերապահելու այն բոլոր իրաւունքներն ու արտօնութիւնները, որոնց տալիս է այդ կոչումը։ («Н. В.»)

◆ Պետերբուրգի համալսարանի իրաւաբան-ուսանողների մի խումբ դիմել է իրաւաբանական ֆակուլտէտի պրօֆեսօրներին՝ խնդրելով հիմնել այդ ֆակուլտէտում զինուորական-դատաստանական օրէնսդրութիւնների դասընթացքներ։ Ուսանողները ցանկութիւն են յայտնել, որպէսզի այդ նպատակով հրաւիրվի Վ. Վ. Կուզմին-Կարաւաեվը դասախօսելու։ («Р. В.»)

◆ Ներքին գործերի մինիստրութեան կից հիմնված մատակարարողական բաժանմունքը նորից է յուզիչ լուրեր ստացել Բեսսարաբիայում, Բէլօրուսիայում, Մօգիլէվսկում և Մինսկի նահանգում սկսվող սովի մասին։ Կարօտութեան չափը պարզելու նպատակով այնտեղ կուղարկվեն պաշտօնեաներ։ («Русь»)

◆ Պետերբուրգի դատաստանական պալատում դեկտեմբերի 22-ին նշանակված է Վըբօրգեան կոչի գործը դռնփակ նիստում։

◆ «Русь» լրագիրը իբրև լուր հաղորդում է, որ Օդեսսայի քաղաքապետ է նշանակվում Եալտայի գլխաւոր հրամանատար գէներալ-մայօր Դումբաձէն։

◆ Պետերբուրգի քաղաքապետը 3000 րուբլի տուգանքի է ենթարկել «Русская Знамя» լրագրին։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 22 նոյեմբերի

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը իշխանուհի Մարիա Մ. Թումանեանցին ընկերութեանս որբանոցին նուիրած դաշնամուրի համար։

Շնորհիւ յարգելի իշխանուհի Թումանեանի առանձին ու մշտական հոգատարութեան դէպի որբանոցը, վարչութիւնս մտցրել է, ի միջի այլոց, թէ որբանոցում և թէ նոր բացած կիսագիշերօթիկ որբանոց-դպրոցում խմբական երգեցողութիւն, իսկ այն որբ աղջիկները, որոնք ցոյց են տալիս առանձին երաժշտական ընդունակութիւններ, սովորում են նաև երաժշտութիւն. և այսպէս լրացվում է երեխաների մէջ այն թերութիւնը, որը մինչև այժմ զգացվում էր։

Վարչութիւն

—

Թիֆլիս, 23 նոյեմբերի

Ստացայ պ. Ալէքսանդր Օբերեանից յիսուն րուբլի (50 ր.) ի նպաստ կովկասահայ կարօտեալների։

Այդ գումարը ես յանձնեցի Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի գանձապահ պ. Ալէքսանդր Մելիք-Ազարեանին ի գործադրութիւն։

Յ. Սպենդիար

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—$9\frac{1}{2}$—2 ժ. ատամի հիւ.

Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։

Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1\frac{1}{2}$—2 ժ. մանկաբարձութեան։

Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ →

ԲԱԳՈՒ (Գանձակ, Եւլախ)

Արագ—գիշ. 12 ժ. 28 ր., Գանձակ—գիշ. 5 ժ. 42 ր., Եւլախ—առաւ. 7 ժ. 19 ր., Բագու—ցեր. 2 ժ. 43 ր.։ Պօստ.—երեկ. 9 ժ. 41 ր., Գանձակ—գիշ. 4 ժ. 13 ր., Եւլախ—առ. 6 ժ. 27 ր., Բագու—ցեր. 5 ժ. 39 ր.։ Մարդատար—ցեր. 7 ժ 53. ր., Գանձակ—ցեր. 2 ժ. 10 ր., Եւլախ—ցեր. 4 ժ. 21 ր., Բագու—գիշ. 1 ժ. 50 ր.։

ԲԱԹՈՒՄ (Գօրի, Միխայլօվօ, Ռիօն)

Մարդատար (№ 7).—առ. 10 ժ. 58 ր., Գօրի—ցեր. 1 ժ. 30 ր., Միխայլօվօ—ցեր. 2 ժ. 58 ր., Ռիօն—երեկ. 7 ժ. 21 ր., Բաթում—գիշ. 12 ժ. 10 ր.։ Պօստ.—առ. 9 ժ. 15 ր., Գօրի—ցեր. 11 ժ. 49 ր., Միխայլօվօ—ցեր. 1 ժ. 19 ր., Ռիօն—երեկ. 5 ժ. 47 ր., Բաթում—գիշ. 10 ժ. 45 ր.։ Մարդատար (№ 5)—գիշ. 11 ժ. 22 ր., Գօրի—գիշ. 1 ժ. 57 ր., Միխայլօվօ—գիշ. 3 ժ. 20 ր., Ռիօն—առ. 7 ժ. 41 ր., Բաթում—ցեր. 12 ժ. 27 ր.։

ԵՐԵՒԱՆ (Ալէքսանդրօպօլ)

Ապր.-մարդ.—ցեր. 3 ժ. 16 ր., Ալէքսանդրօպօլ—գիշ. 2 ժ. 30 ր., Երևան-Ուլուխ. առ. 8 ժ. 22 ր.։ Պօստ.—գիշ. 1 ժ. 8 ր., Ալէքսանդրօպօլ—ցեր. 11 ժ. 53 ր., Երևան—Ուլուխ.—ցեր. 5 ժ. 35 ր., Նախիջևան—գիշ. 12 ժ. 32 ր., Ջուլֆա—գիշ. 2 ժ. 35 ր.։

ԲԱԳՈՒԻՑ (Պետերբուրգի ժամանակով)

Մարդատար—առ. 4 ժ. արագ.—ցեր. 4 ժ. 4 ր.։ Պօստ.—ցեր. 11 ժ. 23 ր.։

ԲԱԹՈՒՄԻՑ—Մարդ.—առ. 10 ժ. 38 ր.։ Պօստ.—առ. 6 ժ. 49 ր.։ Մարդատ.—ցեր. 5 ժ. 46 ր.։

ԵՐԵՒԱՆ-ՈՒԼՈՒԽԱՆԼՈՒԻՑ — Պօստ.—առ. 1 ժ. 58 ր.։ Ապրանք.-մարդատար—գիշ. 1 ժ. 50 ր.։

ՋՈՒԼՖԱՅԻՑ—Պօստ. գիշ. 4 ժամին։ Մարդ.-ապրանք.—ցեր. 3 ժ. 21 ր.։

ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ — Պօստ. — 7 ժամին։ Մրդ. ա-ապրանք.—6 ժ. 58 ր.։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ
Հայ դերասանական ընկերակցութիւնը
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Երկուշաբթի, նոյեմբերի 26-ին,
Տիկ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆԻ բենեֆիսին
Կը ներկայացնէ
Օ. Միրբօյի յայտնի պիէսը
ԺԱՆ-ՌՈՒԼ
Դրամա 5 գործողութեամբ
Տեղերի գները բարձրացրած են
Մասնակցում է ամբողջ խումբը
Սկիզբն է 8 ժ. երեկոյեան
(շ. կ.) 1—2

Կարա-Մուրզայի
ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

Ընդունվում են գիշերօթիկ աշակերտուհիներ. նաև ամիս ու կէս և երեք ամիս դասընթացքով։ Ընդունվում են պատուէրներ կանանց և երեխաների շորերի, իսկ դեկտեմբերի 1-ից պատրաստ կը լինեն վաճառելու համար զանազան տեսակ հագուստներ։
Բեհբութեան և Վելեամինօվսկի փ. անկիւն, № 19.
(շ. կ.) 2—4

1500 ՌՈՒԲԼԻ գրաւականով
ՈՐՈՆՈՒՄ ԵՄ

կասսիրի, գործակատարի կամ արտելշչիկի ՊԱՇՏՕՆ, գործարաններում, գաստրօնօմիչեսկի, բակալէյնի և ծխախոտի խանութներում։ ՅԱՆԿԱԼԻ ԷՐ գումարով վաճառողների մօտ։ Հարկաւոր դէպքում կարող եմ ներկայացնել թէ լաւ րէկօմենդացիա և թէ աւելի գրաւական։ Հասցէս իմանալ «Մշակի» խմբագրատանը։ 8—8

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
Մ. ՁՄՇԿԵԱՆԻ
ԾՈՑԻ 1908 Թ. ՊԱՏԻ
ՍԵՂԱՆԻ
ԵՒ
„Армянскій календарь съ предсказаніями"
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Մեծ քանակութեամբ գնողները դիմում են՝ Թիֆլիս, Գարաեվսկայա № 5, ՄԱԿԱՐ ՁՄՇԿԵԱՆ.
(շ. ե.) 3—12

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան
5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց ա. Ճավճավաձէի № 36.
(ա. օ.) 44—100

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 5—100

ՄԱԼԱԿՕԴԵՐՄ

МЫЛО
МАЛАКОДЕРМЪ
Т-во БРОКАРЪ и К°
МОСКВА

Կատարելագործութիւն է սապնագործական ճիւղում։ Սա ունի խիստ աչքի ընկնող յատկութիւններ, որ մեր խորին համոզմամբ մեծապէս կը գնահատեն գործ ածողները։ Փրփուրը իւղային է և լաւ նստող (ճարպոտ Կօլդ-Կրէմի պէս), ունի կակղացնելու հազուագիւտ յատկութիւններ, կաշուին տալիս է թարմութիւն, թաւշէ տեսք, մաքրութիւն, քնքշութիւն և գեղեցկութիւն։

ԸՆԿ. ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
(258243) 6—8

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Պատիւ ունի յայտնելու ընկերութեան մեծարգոյ անդամներին, որ կիրակի, նոյեմբերի 25-ին, առաւօտեան ճիշտ ժամը 11-ին քաղաքային տան դահլիճում (մուտքը Երևանեան հրապարակից) նշանակված է ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

Զբաղմունքի առարկաներն են.

1. Ընկերութեան նոր կանոնադրութեան նախագծի մասին (Թիֆլիսի Հ. Բ. Ընկերութիւնը վերափոխվում է «Հայոց Կրթական-Բարեգործական Ընկերութիւն Կովկասում»).
2. Ընկ. կտակած հանգուցեալ Յով. Խուդադեանի քարվանսարայի վերաշինութեան լրացուցիչ նախահաշուի հաստատման մասին.
3) Ընկ. քարվանսարայի շինութեան և գնած նոր տան ծախսերը ծածկելու համար 4% րենտաները ծախելու հարցի մասին.

Ծանօթ.—Նոր կանոնադրութեան հետ կարելի է ծանօթանալ ընկ. գրասենեակում առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 3-ը։

(շ. շ. կ) 2—3



ՆՈՐ ԳԻՒՏ
„ԲՕՐՆՕ ՆԱՖԹԱԼԱՆ"

Բոլորովին փչացնում է գլխի թեփը, պիրքացնում մազերը, նպաստում է նրա բուսնելուն և տալիս է նրան իսկական տեսք։

Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, որպէս չը պարունակող ոչ մի վնասակար նիւթ։

Վաճառվում է՝ Кавказское Т-во торгов. аптек. товарами; Офицерское Экономическое общество и въ ихъ отдѣленеіяхъ. դեղատներում, դեղավաճառների և հոտաւէտեղէն ծախողների մօտ։
(7,22) 10—25

Բացված է բաժանորդագրութիւն
„ՄԵՐ ՁԱՅՆԸ"
Հասարակական, գրական և քաղաքական օրաթերթ։

«Մեր ձայնը» կը սկսվի հրատարակվել Նոր-Նախիջևանում, 1907 թ. դեկտեմբերի 1-ից, և լոյս կը տեսնի շաբաթը երեք անգամ։

«Մեր Ձայնում» կը տպագրվեն հասարակական գործիչների պատկերներ, կարևոր նկարներ և ծաղրանկարներ։

«ՄԵՐ ՁԱՅՆԻ» տարեկան բաժանորդագինն է՝

Ռօստովում (Դօնի ափին) և Նոր-Նախիջևանում . . . . . . 5 ր.
. . . . . . 6 ր.
Դրսում . . . . . . 10 ր.
Արտասահմանում . . . . . .

1908 թ. համար բաժանորդ գրվողները կը ստանան 1907 թ. դեկտեմբեր ամսի համարները ՁՐԻ։

Բաժանորդագրութիւնը ընդունվում է՝

1. «Մեր Ձայնի» խմբագրատանը, Նոր-Նախիջևան, Եկատերինեան հրապարակ, տ. Մալխեանի, № 20.
2. Ռօստովում (Դօնի ափին) հետևեալ գրավաճառանոցներում. „Наука и Жизнь", Большая Садовая, Գրանդ Օտէլի հանդէպ, և „Образованіе», Большая Садовая, Վօլժկօ-Կամսկի բանկի հանդէպ։
3. Թիֆլիսում «Գուտենբերգ» և «Կենտրոնական» գրավաճառանոցներում։

«Մեր Ձայնին» աշխատակցելու են հայ գրականութեան մէջ եղած յայտնի գրողները ու հրապարակախօսները։

Խմբագիր-հրատարակիչ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽԱՍԵԱՆ
(շ. շ.) 10—4

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мутлусіаковоръ съ С-ми.
Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.